


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՎԱՆ ԱՌԵԿՈՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՍՏԱՑՈՒՅՑ

Հ Ր Ա Յ Բ Մ Ա Կ Բ Ո Գ Յ Ա Յ

ԽԱԶԱՏՈՒՐ
ԱՐԱՎԵԱՆ



ԱՐԵՎԱՆԻ ՊԵՏՈՎԱՆ ԱՌԵԿՈՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՏԱՑՈՒՅՑ



891.99.992 Կրոնակ

Մ-99

ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կ. 3.


ԽԱՂԱՏՈՒԻՐ ԱԲՈՎՅԱՆ

09.07.2013

69.017

-6 NOV 2011





ԽԱՅԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ՆԵՐԱԿՄԱՆ ԹԵՐՅԱԿԻ

19-րդ դարի 20-ական թվականները հայ ժողովրդի կյանքում նշանավոր դարձան մի խոշոր փաստով: Հայաստանն անցավ սուսական միապետության տիրապետության տակ:

Մինչ այդ պարսիկ և տաճիկ վայրագ նվաճողներն ավազակային հրոսակախմբերով անընդհատ ավերում եյին և ավարի յինթարկում Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, բնաջնջում ազգաբնակությունը: Այդ յերկու բռնակալ ուժերի արանքում տրորվող ժողովուրդը հաճախ ինքնապաշտպանության զենք եր վերցնում, սակայն ընկճվում եր հակառակորդի գերազանց ուժից և հետզհետե կորցնում իր զորությունը: Ժողովրդի իշխող խավերը, աղայությունն ու բարձրաստիճանն հոգեվորականությունը, կամա թե ակամա հաշտվում եյին ստեղծված զրության հետ, աշխատում իրենց շահերով հարմարվել ոտար նվաճողներին:

Քաղաքական և տնտեսական սորկության այս պայմաններում խոսք անգամ չեր կարող լինել ժողովրդի կուլտուրական կարիքների և դրանց բավարարություն տալու մասին, քանի վոր վտանգված եր հրա թե կյանքը, թե պատիվը և թե զույքը:

Այսպիսի անմիտիթար պատկեր եր ներկայացնում Հայաստանը մինչեվ 19-րդ դարի 20-ական թվականները:

Հայերը վաղուց ի վեր իրենց փրկությունն սպասում եյին Ռուսաստանից: Ժողովրդի վիճակով մտահոգված մարդիկ այդ նպատակով բանակցություններ են վարել զեռևս Պետրոս I-ի և Յեկատերինա Ռուբեգի հետ:

Ժողովրդի հույսերը նորից վերակենդանացան, յեր 1801 թվին Վրաստանն ընդունեց սուսական տիրապետությունը, գլշանով մեկ ընդմիշտ ալահովելով յերկիրը պարսիկ և տաճիկ խանների ասպատակություններից: Ռուսական տիրապետության տակ անցնելը հայերի համար ևս որվա խնդիր դարձավ:

Սկսվեց սուսական պատերազմը, վորի ընթացքում հայերը մեծ աջակցություն ցույց տվին սուսական բանակին:

Ամենուրեք նրանք զբկաբաց եյին դիմավորում ոռուսներին իրենի իրենց ազատաբարների: Հայկական դրուժինաները, վոր պատերազմի ընթացքում կազմակերպվում եյին այլ և այլ գաղափաներում, զգալիորեն զորացնում եյին ոռուսական բանակի ուժը: Ոռուսական հզոր բանակի և հայ ժողովրդի միահամուռ ջանքերով 1827 թվին տապալվեց Յերեվանի խանությունը և Հայաստանում հաստատվեց ոռուսական տիրապետություն:

Այսպէս սկսվեց հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման նոր շրջանը:

Ոռուսական տիրապետության ներքո ստեղծված համեմատաբար նպաստավոր հանգամանքների շնորհիվ հայերի կյանքում սկիզբ և առնում կուլտուր-լուսավորական մի շարժում: Հոգեվորականության շրջանում հանդես են գալիս մարդիկ, վորոնք աշխարհայացքով պառակտվելով իրենց դասից, կրոնավորի սքեմի մեջ գործում են իրենի ժողովրդի բարեկամ, լուսավորության և գիտության ջատագով: Այսպես հանդես յեկան նախաբռովյանական շրջանի յերկու նշանավոր հեղինակ՝ հայ լուսավորական շարժման նախակարապետներ Ալամդարյանը և Թաղիաղյանը: Արանք, իրենի անցման շրջանի բանաստեղծներ, տարուցը բարելով հնի և նորի միջնականում հանդիսացան ժողովրդական վոգով արտահայտիչներ և հոլ պատրաստեցին Աբովյանի համար, վորն իր հերթին հանդես գալով գործունեյության ընդարձակ ծրագրով, նախապատրաստեց մի ամբողջ շարժում, վոր լայն ծավալ ու թափ ստացավ 50—60-ական թվականներին:

Սկսվեց մի համառ ու դժվարին կոիվ ընդգեմ խավարի՝ հանուն լուսավորության: Եջմիածինը կատաղի դիմագրություն եր ցույց տալիս հայ լուսավորիչներին: Լուսամիտ և ժողովրդի վիճակով ու կյանքով մտահոգված մարդիկ եջմիածնում դիտվում եյին իրենի կասկածելիներ և հետապնդվում եյին: Մեսրոպ Թաղիաղյանը, վոր իրենի Յերեվանի ծնունդ քաջ ծանոթ եր ժողովրդի հոգսերին ու կարիքներին և մտահոգված եր նրա վիճակով, եջմիածնում չարաշար հալածվում է: Թաղիաղյանի պայշտարի գենքը խավարի այդ քուրմերի գեմ իր թունավոր յերգիծանքն եր: Վեհարանում տեսնելով թքամանը թանաքամանի փոխված, նա խորապես վրդովկում է:

Դա մի ակնառու վիաստ եր այնտեղ իշխող վայրենության: Այդ առթիվ և զրված նրա նշանավոր յերդիծական քառյակը՝ «Թքաման-թանաքամանի» մասին,

«Յերբ թքաման թանաքաման
Դարձյալ տեսեր հայս Վեհարան,
Զի՞նչ այլ քեզ հույս հոջողության
Կահնուս ասուս, Մեսրոպ Դավթյան»:

Յեվ իրոք, Թաղիաղյանը խափանված տեսնելով իր լուսավորական ծրագրելը՝ հեռանում և եջմիածնից:

Հարկավ Թաղիաղյանը չընկճվեց եջմիածնում կրած անհաջողությունից: Նա իր վողջ կյանքի և բազմամյա արդյունավոր գործունեյության ընթացքում թե՛ իրենի բանաստեղծ ու վիպասան և թե՛ իրենի հրապարակախոս ու մանկավարժ քայլ առքայլ հետեւեց իր գաղաքարների կենսագործման, մնալով հաշվատարիմ իր գավանանքին:

Նույնքան հարուստ և ու բեղմնավոր Հարություն Ալամդարյանի գործունեյությունն իրենի բանաստեղծի ու մանկավարժի: Սակայն վահամ զարյանը և վիճ ել Թաղիաղյանը չգտան այն բանալին, վորով հոգեվորականությունը յոթ կողմերով փակել եր ժողովրդի առաջ լուսավորության և գիտության գոները: Այդ բանալին լեզուն եր, վոր հանդիսանում եր ամենակարեվոր Այդ գործուներից մեկը ժողովրդի լուսավորության հարցում: Այս գործուներից Աբովյանը: Նա հասկացավ, վոր ժողովրդի միտքը պիտի բացվի ժողովրդի իսկ լեզուն: Ենք այդ հրաշագործ բանալին Աբովյանի ձեռքում պատմական աննախընթաց գեր կատարեց: Աշխարհաբարի հաղթանակով առաջ գնաց և ապահովեց հայ ժողովրդի լուսավորության գործի հաղթանակը:

Գրականության զուգահեռ առաջ եր գնում նաև ուսումնական գործը: Վաղուց արդեն գործում եյին Մովկայի Լազարյան ձեմարանը և Թբիլիսիի Ներսիսյան գլուխը: Ծայր եր առել աշակերտների և ուսանողների մի հոսանք գեղի Մովկա, Դորապատ և այլ վայրեր: Զարդվել եր մեր կյանքի անշարժության սառույցը, սկսվել վերածնության գարնանամուտը:

Ամենուրեք նրանք գրկաբաց եյին դիմավորում ոռուսներին իրենի իրենց ազատարարների: Հայկական դրուժինաները, վոր պատերազմի ընթացքում կազմակերպվում եյին այլ և այլ պատասխանում, զգալիորեն զորացնում եյին ոռուսական բանակի ուժը: Ռուսական հզոր բանակի և հայ ժողովրդի միտհամուռ ջանքերով 1827 թվին տապալվեց Յերեվանի խանությունը և Հայաստանում հաստատվեց ոռուսական տէրապետություն:

Այսպիս սկսվեց հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման նոր ըրջանը:

Ռուսական տէրապետության ներքո ստեղծված համեմատարար նպաստավոր հանգամանքների շնորհիվ հայերի կյանքում սկիզբ և առնում կուլտուրալուսավորական մի շարժում: Հոգեվորականության շրջանում հանդես են զալիս մարդիկ վորոնք աշխարհայացքով պառակտվելով իրենց դասից, կրոնավորի սքեմի մեջ գործում են իրենի ժողովրդի բարեկամ, լուսավորության և գիտության ջատագով: Այսպիս հանդես յեկան նախարարությանական շրջանի յերկու նշանավոր հեղինակ՝ հայ լուսավորական շարժման նախակարապետներ Ալամդարյանը և Թաղիազյանը: Սրբանք, իբրեւ անցման շրջանի բանաստեղծներ, տարուշերվելով հնի և նորի միջնեվ հիմնականում հանդիսացան ժողովրդական վորով արտահայտիչներ և հող պատրաստեցին Աբովյանի համար, վորն իր հերթին հանդես գալով գործունեյության ընդարձակ ծրագրով, նախապատրաստեց մի ամբողջ շարժում, վոր լայն ծավալ ու թափ ստացավ 50—60-ական թվականներին:

Սկսվեց մի համառ ու դժվարին կռիվ ընդգեմ խավարի՝ հանուն լուսավորության: Եջմիածինը կատաղի դիմավորություն եր ցույց տալիս հայ լուսավորիչներին: Լուսամիտ և ժողովրդի վիճակով ու կյանքով մտահոգված մարդիկ Եջմիածնում դիմովում եյին իրենի կասկածելիներ և հետապնդվում եյին: Մեսրոպ Թաղիազյանը, վոր իբրեւ Յերեվանի ծնունդ քաջ ծանօթ եր ժողովրդի հոգսերին ու կարիքներին և մտահոգված եր նրա վիճակով, Եջմիածնում չարաչար հալածվում է, Թաղիազյանի պայքարի զենքը խավարի այդ քուրմերի վեմ իր թունավոր յերգիծանքն եր: Վեհարանում տեսնելով թքամանը թանաքամանի փոխված, նա խորապես վրդովվում ե:

Դա մի ակնառու փաստ եր այսակեղ իշխող վայրէնության: Այդ առթիվ և զրված նրա նշանավոր յերգիծական քառյակը՝ «Թքաման-թանաքաման» մասին,

«Յերբ թքաման թանաքաման
Դարձյալ տեսեր հայս Վեհարան,
Զի՞նչ այլ քեզ հույս հաջողության
Կանուս աստուս, Մեսրոպ Դավթյան»:

Յեկ իրոք, Թաղիազյանը խափանված տեսնելով իր լուսավորական ծրագրերը՝ հեռանում և Եջմիածնից:

Հարկավ Թաղիազյանը չընկճիկ եջմիածնում կրած անհաջողությունից: Նա իր վողջ կյանքի և բազմամյա արդյունավոր գործունեյության ընթացքում թէ իրենի բանաստեղծ ու վիպասան և թէ իրենի հրատարակախոս ու մանկավարժ քայլ առքայլ հետեւկեց իր զաղափարների կենսագործման, մնալով հավատարիմ իր զավանանքին:

Նույնքան հարուստ և ու բեղմնավոր Հարություն Ալամդարյանի գործունեյությունն իրենի բանաստեղծի ու մանկավարժի: Սակայն վնչ Ալամդարյանը և վնչ ել Թաղիազյանը չգտան այն բանալին, վորով հոգեվորականությունը յոթ կողպեքով փակել եր ժողովրդի առաջ լուսավորության և զիտության դռները: Այդ բանալին լեզուն եր, վոր հանդիսանում եր ամենակարեվոր Այս գործոններից մեկը ժողովրդի լուսավորության հարցում: Այս ըստունեց Աբովյանը: Նա հասկացավ, վոր ժողովրդի միտքը պիտի ըացվի ժողովրդի խոկ լեզուն: Յեկ այդ հըաշագործ բանալին Աբովյանի ձեռքում պատմական աննախընթաց գեր կատարեց: Աշխարհաբարի հաղթանակով առաջ գնաց և ապահովեց հայ ժողովրդի լուսավորության գործի հաղթանակը:

Գրականության զուգահեռ առաջ եր գնում նաև ուսումնական գործը: Վաղուց արդեն գործում եյին Մովկայի Լազարյան ձեմարանը և Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը: Ծայր եր առելաշակերտների և ուսունողների մի հոսանք զեպի Մովկա, Դորոշական պատմական աննախընթաց գարնանամուտը:

Կ Յ Ա Ն Ք Ը

Թե զիտուն, խելոք մարդիկ ինձ պախակին, դռ ել ինձ պահիք՝ սիրելի ազգ, չունեմ իմ ուզածս են ա, վար թեզ ծառայիմ, են' իմ կյանքու տամ, բանի շունչս բերանում ա:

Խ. ԱՐԱՎԵՐԴԱՆ

19-րդ դարի 40-ական թվականներին հայ գրականության և կյանքի ժամանակարի հարիվունում մի վառ արեվի ծագեց. այդ արեվը—մեր ժողովրդի առաջին լուսավորիչն եր, անմահ Խաչատուր Արովյանը: Արովյանով և սկավում հայ գրականության և կուրտուրայի պատմության նոր շրջանը: Եցմիածինը, միջնադարականության այդ հայկական Բաստիլը, իր խավարի քուրմերով, անփառատելի մշտաշով եր պատել ժողովրդի միտքը, անխորտակելի պատնեշի պես կանգնել նրա առաջադիմության ճանապարհին: Կրոնն իր մահարեր թույնն եր տարածել ամենուրեք: Լեզուն, գրականությունը, գիտությունը, դպրոցը յեկեղեցու շահերի սպասարկուներն եյին:

Ով եր լինելու այն խիզախը, տուստելական այն կտրիճը, վոր այրմելով պիտի բերեր անշեղ հուրը, մի խավար ժողովուրդ լուսավորելու համար: Այդ կարիճը դարձավ Խաչատուր Արովյանը:

Հեքիաթային Դանկոյի պես պատռելով կուրծքը, Արովյանը հանեց իր հրաբորքը սիրով և լուսավորեց ժողովրդի առաջագիշմության ուղին: Պրոմեթեոսյան լույսն ու գիտությունը նա տվեց մեզ և նրան բաժին ընկան մարդկության մեծ բարեկամի ահավոր տանջանքները: Արովյանը վոչ միայն հայ մանուկների, այլ և ամբողջ հայ ժողովրդի առաջին կրթիչն ե, ուսուցիչը, դաստիարակը, լուսավորիչը: Նա վոչ միայն առաջինը մանուկների ձեռքը տվեց գերմանական հանճարեղ բանաստեղծներ՝ Գյոթեյի և Շիլլերի յերկերի գերմանական բնագրերը, այլ և առաջինը հայ ժողովրդին պարզեցեց այդ և ուրիշ հանճարների ազատասիրական, հումանիստական, լուսավորական վոգով ներշնչա-

չըզած իր անմահ ստեղծագործությունները, զրանց թվում առաջին հերթին հոչակավոր «Վերք Հայաստանի» վեպը: Հայ կյանքի այդ խավարի թագավորության մեջ, հայ գրականության անմշշակ դաշտում արմատավորվեց և փարթամորեն աճեց Արովյանի ստեղծագործության պտղարեր ծառը, վորից մեր ժողովուրդը առաջին անգամ քաղեց լույսի, գիտության և իմաստության պըտուղը: Արովյանի ստեղծագործությանը հայ վերակենագանցող ժողովրդի առաջին շունչն եր, սթափման առաջին շարժումը:

Առաջին անգամ Արովյանի բերանով խոսեց հայ ժողովուրդը, խոսեց պարզ, անկեղծ, սրտառուչ: Դարեր շարունակ ոտար բռնակալների ճիրանճներում հոշոտված, նրանց յերկաթե կրունկների տակ արուրված ժողովուրդը, Արովյանի միջոցով բացեց իր սիրով, իր խոր վերքը և դարման պահանջեց: Արովյանի վերքը պարսիկ խաների բարբարոսություններից և կամայականություններից բազմիցս տուժած, ստրկացած հայ ժողովրդի վերքն եր:

Արովյանի բերանով առաջին անգամ պարզ ու մեկին խոսվեց ժողովրդի կարիքների, իրավունքների և նրա նկատմամբ ունեցած պարտավորությունների մասին: Նա հանդիսացավ այն մեծ ժողովրդասերը, վոր իր կյանքի նպատակը, իր բախտն ու յերջանկությունը կապեց ժողովրդի հետ, նրա գոյության, բախտի ու յերջանկության հետ: Ժողովրդի սիրով վառեց և սպասվեց նրա մեծ սիրով: Արովյանն այն առաջին մտավորականն եր, վոր դուրս գալով ժողովրդի ծոցից և ստանալով յերժուական կրթություն, կենցաղով ու կուլտուրայով բարձրացավ նրանից, բայց չխորթացավ նրա վոգուն, միշտ մնաց նրա հարազատ զավակը: Նրա ստեղծագործության շունչն ու վոգին ժողովրդի ու հայրենիքի սերն ե, ջերմ ու սրտաբուխ մի սեր, վորը դյութիչ ներգործություն և ունենում ընթերցողի վրա: Արովյանը սիրահարված եր ժողովրդին: Նա մի սիրահար աշուղ եր, այրված վոչ թե իր յարի, այլ իր ժողովրդի սիրով: Նա իր մեծ ու լայն սիրով սիրել և ամբողջ մարդկությանը՝ առանց ցեղի և հավատի խըտը բության: Արովյանը մեծ հումանիստ ե: Նրա մեծ սրտին խորթ և յեղել ուսարատեցությունը, նա կովկասի ժողովրդներին հայերին վրացիներին և թուրքերին մի ընտանիք և համարել, միենույն հողի ու ջրի ծնունդ, զողված միենույն սովորություններով, հասկացողություններով ու շահերով:

*
**

Խաչատուր Աբովյանը ծնվել է Յերեվանից հինգ կիլոմետր հեռավորության՝ վրա գտնվող Քանաքեռ գյուղում, 1809 թվին^{*}), «Վերք Հայուսանի» վեպի մի ծանոթության մեջ, հեղինակն այսպիս է նկարագրում իր ծննդավայրը. «Յերեվանուց ը հինգ վերստ հեռու մեկ գեղ, հյուսիսային կողմն ընկած, տեղը բարձր, ջուրը քաղցր, ովզ գեղեցիկ չորս կողմը բաղերով լիքը, մեջը յերկու հրաշալի յեկեղեցի, հազար քյալավա ու այժմ հիսուն տուն կա: Ամառվաճն տեղը Յերեվանու խամերի»:

Աբովյանների տունը Քանաքեռի նշանավոր ընտանիքներից է յեղեւ: Արով պապի, այդ առաքենի, աղսիվ մարզու հոչակը յերկար և ապրել համարյուղացիների մեջ:

Նրա հյուրատսիրության և առատաձեւության մասին հիացմունքով ու հազարտությամբ և խոսել ինքը՝ վիպասաննը: «Հա-

* Աբովյանի ծննդյան թիվը նրա կյանքի բարձրթիվ տեղեծվածներից մեկն է: Խիստ հականական են մեզ հասած տեղեկություններն այդ մասին Սալայն մեր կարծիքով ամենահայտնականն այն ե, զոր Աբովյանը ծնվել է 1809 թվին:

Պրոֆեսոր Դարրատի առելով 1829 թվին Աբովյանը քսան տարեկան եր: Աբովյանին Դուրպատ ուղարկելու առթիվ յեղած նույն թվի բոլոր պաշտոնական թղթերում նա համարվում է 20-ամյա պատանի: Նիկոլայ առաջինին ուղղած 1829 թվի նամակում Աբովյանն իրեն 20 տարեկան և համարում Յերեվանի գավառական դպրոցի ցուցակ ծառայությունների ավյաները ևս 1809 թվի վրա յեն պնդում: Մնացած տվյալները, բացի մեկից, ուր Աբովյանն իր ծննդյան թիվը 1804—5 և համարում, մոռենում են 1809-ին:

Հայունի յեւ, զոր Աբովյանը և նազարյանը դասընկերներ եյին ներսին Դուրպատ օւղարկելու առթիվ յեղած գավառական նաև պահումում: Յեթե ընդունենք այն ընդհանրացած կարծիքը, թե Աբովյանը ծնվել է 1804 թվին, ապա կտացվի, զոր նա մեծ և յեղեւ նազարյանից 10 տարով (վերջերս Կաղանում հայունաբերված ինքնակենսագրականի և ծննդականի համաձայն նազարյանը ծնվել է 1814 թվին): Իսկ այդպիսի հականական տարբերության պայմաններում նրանք թնշալեա կարող եյին միենույն զասարանի աշակերտներ լինեն, յերբ յերկուսի ուսման ընթացքը ևս նորմալ և յեղեւ Հայունի յեւ, զոր Աբովյանը սովորել սկսել է 9-10 տարեկանից, հայվանաբար նազարյանը 3-4 տարի առաջ և սկսել իր ուսումը, զորով և բացարձում և նրանց տարբերի այդ հնարավոր և նորմալ տարբերությունը:

Վերջապես զիտենք, զոր Ներսիսյան դպրոցում Աբովյանը և նազարյանը մտերիս ընկերներ եյին, ինչ մտերմություն կարող եր լինել 11 տարեկան մանկան և 21 տարեկան պատանու միջեղ:

Հետեվաբար Աբովյանը ծնվել է 1809 թվին:

Երբ տարի կը լի լուսահոգի Ապովը մեսել ա, ելի նրա վողորմին հա կա, հա կա: Թուրք ու Հայ նրա զերեզմանովն են որթում՝ ու առում: Ճամփի վրի մենած իզու անունը Հնդաստան ա հասել, են ջադրան բաղը իր ձեսովը ալնկեց՝ վրը անց կենոզը գնա նրա բարությունը վայելի: Չորս կատեղան ամեն տառափու՛ ինչ պտուղ ծառից վեր եր ընկնում, հավաքում, քթոցներով տանում ելին ճամփին դնում ու անցկենողի ջերն ու խութինը լցնում: Են մեցուր վագակ մեկ պտուղ. մեկ թաս զինի իրենց տանը չելին բանացնի, ջոկ կպահեյին ու աղքատ զեղցոնցը կրաժանեյին»:

Նրա որով Աբովյանց տան նախկին հալստության հետքն անգամ մնացած չի յեղեւ: Փոքրիկ Խաչտառը ծնվել է՝ մի անշուք խրճիթում, վորի հարկը բնակիչներին անկարող և յեղեւ պատրս պարել քամուց, անձրեվից, ձյունից, վորի պատերը ճեղքեր են ունեցել իսկ դուռն ու յերթիկը տեղի յեն տվել տարերքի առաջ: Հայրական տունն Աբովյանը նկարագրել ե իր «Խղճիկն այն խըր ճիթ» հրաշալի բանաստեղծության մեջ:

Խղճիկն այն խրճիթ, անզարդն այն սրահ Յերկերթեկ այն տուն ծխածեփի քարյա: Լուսահատ անկյունք, խոսոչք բազմաան Հատակի ի հողո, առասապ փայտյա... Ի տանյաց ի հորմոց ի ճեղքաց լուսամտից Աստ ի ներքս տեղային, հոսեյին, թափեյին, Յեկ կարկուտ և հեղեկ և անձրեկ և ոումք ձյունից, Յեկ մըրիկ և հոսան, փոթորիկ սասաւագին...

Տիկ, գիշեր՝ անձածկույթ անփակ անխափան Մղեյին ի հարկ մեր սոսկաղեմք այն ընության, Գոռալով, վանելով, մոնչալով կատաղաձայն Խրոխտային, կովեյին, քանդեյին զմեր կայտն...

Աբովյանի մեջ վաղ մանկությունից և զարթնել սեր զեռի բնությունը, սքանչացում բնության յերկույթներով ու տեսարաններով, գիշերն իր տատղերով ու լուսնով, յերեկը արեվի պայծառ լուսավորությամբ, ծիածանը, կայծակն ու վորոտը, յերկիրը սիրա պարուրող իր հազար ու մի հրաշալիքներով նրա մեջ առաջցրել են ընության պաշտամունք, զոր հետագայում խոր դրոշ և գրել նրա ստեղծագործության վրա:

Արովյանի ճնողներն ապրել են նահապետական պարզ ու համեստ կենցագով, շաայլաբար տվել են իրենց սերն ու գուրզութանքը փոքրիկ Խաչատուրը և նոր տարել նրա կրթության մասին: Արովյանի մեջ շատ վազ և նկատվել հակում գետի ուսումը: Խաչատուրի հայրը՝ Հաբությունը տասնամյա վորդուն հանձնում է Եջմիածնի վանքի գպրոցը: Նա մտնում է Անտոն յեղիսկողոսի հովանավորությաններքո և, ըստ այն ժամանակվա սովորության, գոռնում է նրա փոքրափորն ու աշակերտը: Բայց ինչ կարող եր ստանալ ուսումնատենչ պատանին տգետ հոգեվորականների հետամնաց միջավայրում: Թալախայի մարմին սառսուեցնող տանջանքները Եջմիածնի խալիքայական դպրոցում տվելի մեռյումը, քան կատարելագործում եյին յերեխաների ընդունակությունները: Յետանդուն, դյուրագաց Խաչատուրի համար սպանիչ եր այդ հեղձուցիչ մթնոլորտը: Արովյանը չեր կարողանում հաշտիկ ծոմ ու պահքի, բթացնող աղոթքի, լավն ու աղնիվն սպանող այդ վայրենի, անրարոյացնող իրականության հետ: Նա փախչելու, հեռանալու շատ փորձեր և անում, սակայն բռնվում և հետ և բերքում, զորից նրա վիճակն ավելի յե վատթարանում: Իր պատանեկության տարիներին Եջմիածնից ստացած տպավորություններն այնքան սոսկալի յեն յեղել զոր նա հետապայում ևս մեծ տհաճությամբ և զորքը վանքի պարփակներից ներս դրել:

1822 թվին Անտոն յեպիսկոպոսը նրան տանում է Թիրիլսի և կրթության հանձնում ժամանակին հայտնի հայկաբան համարված զարաբացը Պողոս վարդապետի մոտ, զոր աշակերտներ եր կարգացնում Տափի ժաղի վանքի՝ իր իցի մեջ: Ստեփանոս Նազարյանը, զոր Արովյանի դասընկերն եր թե այլտեղ և թե ներսիսյան գպրոցում, ասում և. «Այդ վարժապետը ավելի ծեծ, քան թե ուսում և տվել աշակերտներին»:

1824 թվին Արովյանն ընդունվում է Ներքիսյան նորաբաց գպրոցը: Այդ գպրոցի տարբերությունը նախորդների համեմատությամբ շատ ել մեծ չեր ինչպես ուսման: վորակի, նույնպես և դասավանդման մեթոդների տեսակետից: Սակայն ինչ ել զոր լիներ, Արովյանի հոգեկան աշխարհի համար այդ միջավայրի աղբեցությունը բարերար յեղավ: Այն ժամանակ Ներքիսյան գպրոցի աხուուչ եր ականավոր բանաստեղծ Հարություն Ալամդարյանը:

Հանձին նրա Արովյանը վաստակեց մի լտվագույն բարեկամ, մի սիրելի ուսուցչի, զոր հավանորեն և հանդիսացավ նրա ստեղծագործական թոթովանքների առաջին քաջակերողը: Ալամդարյանն է անշուշտ այն հեղինակը, զոր սեփական որինակով: Արիքական իր գողարիկ բանաստեղծություններով ստեղծագործական աղղակ հանդիսացավ Արովյանի համար: «Թերեւս պատահական չե այն փաստը, զոր մեղ հասած Արովյանի ամենավաղ շրջանի բանաստեղծությունները վերաբերվում են այդ տարիներին» (1824թ.):

Արովյանը միշտ ել մեծ յերախտիքով և խոսել Ալամդարյանի մասին և բանաստեղծական սրտառուչ տողեր նվիրել բազմերախտ ուսուցչի հիշատակին:

Վոչ պակաս նշանակալից եր գասլնկերների շրջանի աղղեցությունն Արովյանի վրա: Նրանցից շատերն ուսման ծարագով տոչորվող աղնիվ պատանիներ եյին, զորոնք Արովյանի պիս ու նրա հետ մեկ տեղ ուժատ եյին արել զինվելու գիտությամբ ու նվիրվելու ժողովրդի լւսավորության գործին: «Ի 15 ամյաց հասակի իմո ընթերցյալ զգարս Դուկաս Վանանդեցվո, Սիմեոն կաթողիկոսի, Միսիթարա Արբայի և այլոց նմանորինակ հայր քննասիրաց, փափակեյի և յես իմովսանն կարողությամբ պիտանի լինել աղգին իմում սիրելլո»:

Նրանցից գուրս յեկան գրական-հասարակական գործիչներ, մանկավարժներ և այլն: Հատկապես մեծ ծառայություններ մատուցեց մեր ժողովրդին հետապայում հայտնի հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր Ստեփանոս Նազարյանը, զորի հետ Արովյանը մնաց բարեկամական սերտ կապերի մեջ մինչեւ իր կյանքի վախճանը:

Ահա թե ինչ ե զրել նազարյանն այդ տարիների մասին: «Արովյանը լինելով չափահաս աշակերտներից մինը զուցե և ալելի մտախոնը յուր ընկերների մեջ, նշանավոր եր մանավանդ յուր շատ զորավոր հիշողությամբ: Արովյանը մի մեծ ուսումնական չափահասը աշխարելի յեր այդ բանը այն վայրիկերո, չքափոր ուսումնաստվության մեջ: բայց պիտո յե ասել արդարությամբ, զոր մի քանի կենդանի սերմեր, մի աղնիվ ձգտողություն գեպի ուսումնականացացան այդ ուսումնաբանից մի քանի մասնավոր-

ների մեջ; Յեկ Արովյանը հրաժարվելով թիֆլիպից դեպի Եջմիածին, տարավ յուր սրտի մեջ մի վառ ուսումնասիրության կրակը:

1826 թվին Արովյանն ավարտում է Ներսիոյան գողոցը: Եջմիածնում Արովյանի համար անսահման ծանր շրջան է սկսվում: Ուստի ծարավով տոչորգով նրա միտքը տղետ հոգեգորականների շրջանում, ինչպես անսապատում, ոնունդ չի գրանում: Նրան ձգում է լուսավոր Յեկոպան: Այնտեղ կրթվելու, աղա հայրենիք վերադառնալով ժողովրդի լուսավորության զործին նվիրվելու միաբը գիշերացերեկ դադար չի տալիս նրան: «Ապրել և մենին հայրենիքիս համար, — զրում է Արովյանը, — ահա այն խողիբը, վոր յես ընտրել եմ պատանեկանան տարիներից ի վեր»: Բայց ով եր լսողը, ով պիտի համարա ազնիվ պատանու ձգտութենիրը, ով եր մտահոգված ժողովրդի լուսավորության խճղով, ով վերջապես կընդառաջեր նրա ցանկություններին, կողներ իրազորելու այդ գեղեցիկ ծրագրերը: Հայրենասիր պատանին ապրում է խոր վորերգություն: Անհեռանկար վիճակից նա շատ անգամ փորձում է յեկը գտնել անձնասպանության մեջ: Պետք եր օժագած լինել բարոյական մեծ ուժով ու զորեղ կամքով, այդպիսի միջավայրում հոգու ազնվությունը, մտքի վեհ ձգտումները չկորցնելու և շրջապատի կլանող տիզմի մեջ չխրվելու համար: Արովյանն ունեցավ այդքան ուժ, այդպիսի զորավոր հոգի: Այդ իրականությանը նա միշտ նայեց ներքին անկեղծ վրդովմունքով և հպարտ արհամարհանքով: Այս ծանր, վհաաեցուցիչ վիճակից Արովյանին հանեց մի յերջանիկ պատահականություն, վորը բախտորոշ նշանակություն ունեցավ նրա համար:

1829 թվին Դորբատի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդրիխ Պարբուր Արարատն ուսումնասիրելու մտադրությամբ Եջմիածին և գալիս: Արովյանին և վիճակիում, իրը այն ժամանակ միակ սուսապետի Եջմիածնում, դառնալու Պարբուրի թարգմանն ու ուղեկիցը նրա գիտական արշավի ժամանակի:

Այն պահին, յերբ դարավոր նախապաշտամունքների գերի դառած Եջմիածնի կղերը ան ու զողով և լցվում, լսելով Պարբուրի խիզախ ձեռնարկության մասին, յերբ բոլորը «անկարելի», «անհնարին» ու «անմիտ» են համարում Մասիս բարձրանալու

նրա մտադրությունը, — Արովյանը, պատանեկան խանդավառ մտքի մի խիզախ թուխչքով վոտնատակ տալով հազարամյա ավանդությունը, վոգեվորվում է պատկառելի գիտնականի ձեռնարկությամբ և սիրահոժար միանում նրա գիտական արշավախմբին: Կրօնական ավանդությունը պատմում է, վոր Արարատի գագաթը բարձրանալու ասածին անհաջող փորձը կատարել է առասպելական ու Հակոբը, Նոյի տապանը ացքով տեսնելու դիտավորությամբ: Բայց այն, ինչ չեր հաջողվել «սուրբ մարտուն», իրագործեցին գիտության մարդիկ վորոնց սակայն նետաքրքրում եր վոչ թե Նոյի տապանը, վոր ի գեղ այնտեղ չերեցաց, այլ հակա լեռան՝ գիտության համար չափազանց շահավետ հատկությունների ուսումնասիրությունը: Հաղթահարելով տարերքի ամենի ուժը և կրօնական նախապաշտամունքների կատարած վիմագրությունը, նրանք անկարելին կարելի դարձըրին, անհնարին՝ հնարավոր: Առաջին անգամ խիզախ մահականացուների վորքը տրորեց գագաթը սրբազնն ու անմատչելի համարված Արարատի, վորի անունը քրիստոնեական յերկուղածությամբ եր ցնում հավատացյաների սրտերը: Դա մի մեծագործություն եր, մի անորինակ խիզախություն: Մեր այն ժամանակված իրականության մեջ դա գիտության առաջին մեծ հաղթանակն եր կրօնական սնութիապաշտության դեմ: Գիտության վեհ բացունքներին հասած Պարբուր գառնում է Արովյանի իրեալը: Սոխայի խավարում ծնված և մեծացած պատանին լուսավոր Յեկոպայից յեկած գիտնականի առաջ զդում է խեղծ ու նվաստ: Այժմ ավելի քան յերբեն Արովյանը ձգտում է գուրս դալ լույս աշխարհ, զուրս պրծնել Եջմիածնի շինական պարիսպներից, թթվափել յեկեղեցու և կրօնի լուծը: Այս ցանկություն Արովյանը հայտնում է Պարբուրին, վորն իր հերթյունն Արովյանը հայտնում է Պարբուրին, վորն իր հերթին հմայված եր Արովյանի պարզ ու շիտակ բնավորությամբ, քնքույց հոգով, ողնիկ հակումերով, ուսման բուռն ունչով և ժողովրդին ոգտակար լինելու անկեղծ ցանկությամբ: Այս բոլորին ավելանում եր Արարատը բարձրանալու ընթացքում Արովյանի ցուցաբերած անորինակ տոկունությունն ու խիզախությունը: Պարբուրի համար Եջմիածնի խավարամիտ կղերի շրջանում Արովյանը մի կատարյալ զյուտ եր, տղիտության ծովում կորած մի արգամանդ:

Պարբուտն անխոնջ և տոկուն գիտնականի, գիտության ենսուազ դիաստի մի ցայտուն որինակ է: Գիտության լույսը աշխարհի խուլ ու մութ անկյունները տարածելու գործը նրա կյանքի նշանաւանն է յեղեւ: Հավատարիմ իր սկզբունքին, հավատարիմ գիտության գործին, Պարբուտը չեր կարող անուշադրության մատնել ուսումնառենչ պատահուն, անկատար թողնել նրա տարիների իղձը: Նա կանեց, վոր Արովյանը կոչված է մեր ժողովրդի լուսավորության առաքյալը՝ լինելու և չսխալվեց:

Պատկառելի գիտնականը խոստանում է ոգնել Արովյանին իրագործելու իր տարիների տեսչը:

Պարբուտի վերագրածից հետո անհամբեր սպասումի ծանր որեր և ապրում Արովյանը: Բարի լուր ավետող նրա նամակը ուշանում է: Արովյանն սկսում է հուսահատվել: Այդ տրամադրության արդյունք է նրա դիմումը՝ ուղղած Նիկոլայ Լին: Հայտնելով սովորելու իր լուսն տենչը, ժողովրդին ծառայելու անկեղծ ցանկությունը, Արովյանն ավելացնում է հուսահատությամբ: «Կամ հուսնել բաղձանաց իմոց, կամ տալ զանձնիմ ի վտանգ կորստյան»:

Արովյանի վիճակը ծանրանում է մանավանդ նրանով, վոր Եջմիածնում սկսում էն կասկածանքով վերաբերվել նրան, Աւրարտի գագաթ բարձրանալը սրբապղծության նման մի բան համարելով: Վերջապես ստացվում է Պարբուտի նամակը: Արովյանի գժբախտությունը հանկարծ փոխվում է յերջանկության: Առայդ նամակը:

«Հարգելի սարկավագ, սիրելի բարեկամ,

Վորոշված է Ձեր վիճակը. կատարվել է, ինչ ցանկանում էյիք, նորին պայծառափայլություն կոմս Պասկեվիչ Յերեվանը սկին, նույնպես և նորին լուսափայլություն ժողովրդական լուսափորության նախարար իշխան Լիվենը հարգեցին իմ՝ Ձեր մասին արած խնդիրը, այնպես վոր նորին Կայսերական մեծությունը ամենավողորմածաբար Ձեզ թույլավություն շնորհեց Դորպատում Յ տարի մնալու, վորապեսզի սովորեք հոգուտ հայ ժողովրդի կրթության, ընդ նմին նշանակելով Ձեզ տարեկան 200 սուրբի արձաթ, 200 սուրբի ճանապարհածախսի և նույնքան ել վերագրածի վարձ: Ասոված Ձեզ նետ լինի, սիրելի բարեկամ: Անհամբեր սպասում եմ Ձեր ուրախաբեր գալը»

աին և հավիտյան կլինեմ, հարգելի սարկավագ, սբոով Ձեզ անձն նըվեր՝ Ֆ. Պարբուտ:

Դորպատ, 4 ապրիլի, 30 թիվ:

Անկասկած է, վոր Նիկոլայ Լ և նրա չինովնիկները հոգ տասներով Արովյանի կրթության մասին, նույն ունեցին նրանից պատրաստելու միավետության շահերին նվիրված մի հլու հպատակ. սակայն նրանք սխալվեցին . . .

Յեվ այսպես, Պարբուտը Արովյանին առաջնորդում եր գեպի գիտության տենչալի բարձունքները, վորտեղից նու աշխարհին պիտի նայեր նույնպիսի լայն հայացքով, ինչպես մի անգամ նայեց Արարատի յերկնամերձ զագաթից: Սակայն նրա յերազների պայծառ արել ելի մի պահ սքողվում է իրականության թանձր մշուշով: Արովյանի Դորպատ գնալու ցանկությանը գեմ և կանգնում Յեփրեմ կաթողիկոսը: Մյուս կողմից ել խոչընդոտ են հանգիստանում ծնողները, վորոնք չեն կարողանում հաշտվել սիրելի վորդուց այնքան յերկար ժամանակ բաժանվելու մտքի հետ, վորոնց համար հեռավոր և անծանոթ աշխարհը մի կրտսյան անդարձ ճանապարհ եր:

Կոտրելով Յեփրեմ կաթողիկոսի համառ գիմազրությունը և անտես առնելով ծնողների արտասունքները, Արովյանը 1830 թվի հուկիսին մեկնում է Պետերբուրգ, այստեղից ել՝ Դորպատ:

Դորպատում անցկացրած վեց տարիների ընթացքում Արովյանի համար Պարբուտի տունը յեղել է հայրական հարազատ հարկը, իսկ Պարբուտը և իր ամուսինը ծնողական սեր և խամք են ցույց տվել, մոռացնել տալով հարազատ ծնողներին: Ծնորհիվ Պարբուտի, Արովյանը շրջապատված է յեղել սիրով և առանձին հոգատարությամբ նաև մյուս զամանակուների և նրանց ընտանիքների շրջաններում:

Արովյանի արխիվում պահպանվող գերմանացի բարեկամներից ստացած բազմաթիվ նամակներն ու այլ գրությունները գաղափարը են տալիս այն արտակարդ ջերմ մթնոլորտի մասին, վորապեղ անցան նրա կյանքի այդ տարիները: Բարեկամական այդ շրջապատված Արովյանը մոռացության չի տվել իր հայրենիքն ու հարազատ ժողովրդին: Նրա վառ հայրենասիրությունը վոչ միայն չի նվազել, այլ առավել բորբոքվել է ու ընդուրեկել նրա վողջ եյությունը: Հայրենիքի կարոտը մաշել է Արովյա-

նին այն աստիճան, վոր հաճախ միայնության ժամերին նա հոռաչել է և դառնորհն արտավիել: Աբովյանին առաջարկված է յեղել մնալ համալսարացնում իրեն արեվելյան լեզուների դասախոս, սակայն նա կտրականապես մերժել է: Հայրենիքում գործելու հետանկարը ուրախությամբ է լցըել նրա սիրտը և կրկնապատճել նրա ընդունակություններն ու ուսման սերը:

Դորպատը յեվրոպական կուլտուրայի ոջախներից մեկն ել ուսուական միապետության մեջ: Ֆրանսական մեծ լուսավորիչների և գերմանական «Գրոհի ու Փոթորկի» շրջանի հանճարեղ հեղինակների քաղաքական-հասարակական գաղափարները վազուց ելին գառել վողջ Յեվրոպայի սեփականությունը: Նրանց հայացքներն իշխում ելին ամենուրեք, և Դորպատը այդ ազգեցության շրջանակներից դուրս չեր մնում: Գյոթեյի և Շիլլերի յերկերը դառնում են Աբովյանի գերմաներենի դասազրքերը, Լեսսինգը խորապես հուզում եւ հայացնում, Գյոթեյի մահը ցնցող ներգործություն և ունենում նրա վրա: Գերմանական միլրազրից նա թարգմանում է մեծ բանաստեղծի մահվան առթիվ մի հոգված, վորը ցույց եւ տալիս գետի հանճարեղ բանաստեղծն ունեցած նրա խոր հարգանքը:

Աբովյանը թարգմանել է Գյոթեյի «Անտառի արքա» հայտնի բանաստեղծությունը, ինչպես նաև Շիլլերի մի շարք բանաստեղծությունները: Իր գերմանացի բարեկամներից մեկի ալբոնում տեսնելով Շիլլերի բանաստեղծության ինքնագիրը, Աբովյանը խորը հրձանք է ապրում ու անմիջապես արտագրում է, կցելով բանաստեղծությանը մի ընդարձակ ծանոթություն:

Գրտկան-կուլտուրական այս մոտ կտարը գերմանական մեծ կլասիկների հետ, ինչ խոսք, անհետեանք չանցան Աբովյանի համար: Մեր կյանքի շտուրմ ունի զբանքերը հարազատության շատ թելերով և կապված գերմանական հետամնացության դեմ գրոհող փոթորկու մտքերի հետ: Շիլլերի «Ավագակները» և «Վիլհելմ Տելլ», ինչպես և Գյոթեյի «Վերթերը» խորը դրոշմ են դրել Աբովյանի «Վերքի» վրա:

Աբովյանի մանկավարժական հայացքների և գրական ստեղծագործության վրա պարզուց նշմարվում ե նաև ժամանակակ թուասոյի ազգեցությունը: Նրա արխիվում գտնվում է «Նոր Ելոիզա» թարգմանական փոքը, վոր անավարտ ե մնացել հավանությունը ապահովությունը:

Այս կյանքի դժբախտ հանգամանքների և վողբերգական՝ վախաճանի շնորհիվ: Այս կաստն ինքնին շատ բան է նշանակում:

Անտիկ աշխարհի գրականություն և փիլիսոփայություն, վեղ վերածնության խոշորագույն ներկայացուցիչներ, Գրաննական մեծ լուսավորիչներ և վերջապես գերմանական կլասիկ գրականություն ու փիլիսոփայություն,—ահա համաշխարհային կուլտուրայի այն հիմնական մոմենտները, վորոնք Դորպատում հանգլանացան Աբովյանի ուսումնասիրության առարկաները:

Յեվրոպական քաղաքակրթության հետ մեկտեղ, Աբովյանի վրա անշուշտ մեծ ներգործություն և ունեցել նաև ուսուական կուլտուրան: Առաջին անգամ նա ներկայացում է գիտում Պետերբուրգում, վոր անջնջելի տպագրություն և թողնում նրա վրա: Դորբատում նա ծանոթանում է ուսու հոչակավոր բանասեղծ Ժոկովիկու հետ և այդ առթիվ իր հիշատակարանում գրում հիացմունք արտահայտող հետեւյալ տողերը: «անվանի մարդուն, ուսուց գրականության նախադիմին տեսնելու ուրախությունից, յերակներու շարժվեցին»: Աբովյանը թարգմանում է նշանագործանակներին կարամղինին, Կրիլովին, Դմիտրիյեվին, Խեմենցերին և ուրիշներին: Նրա այլ և այլ աշխատառությունների մեջ հանդիպում ենք Լոմոնոսովի, Դերժավինի, Գրիբոյեդովի և այլ ուսու նշանագործ հեղինակների անուններին:

Իրեն ազատ ունկնդիր Աբովյանը հաճախում է համալսարանի գասահիսություններին և միաժամանակ կամեր տոննում Պարրոտից ու նրա պաշտօնակիցներից: Պարրոտի դիտավորությունն եր Աբովյանից պատրաստել մի բազմակողմանի տորին զարգացած մարդ, վոր պիտի նվիրվեր հայ ժողովրդի, հատկապես նրա մանուկ սերնդի, կրթության գործին:

Ըմբռնելով լուսավորչի իր պատասխանառու միսիան, Աբովյանը չի խորշել վոչ մի բանից, սովորել ե ամեն ինչ, ձգտել ե ամեն բան գիտենալ և ամեն կերպ ոգտակար լինել ժողովրդին: Դիտությունների հետ մեկտեղ նա հետաքրքրվել է նաև արհեստներով, անգամ սովորել ե հաց թխելու և ճաշ պատրաստելու յեվրոպական յեղանակը:

Յեկայական, բեռնավորված առաջափոր մարդկության ըստեղծած մտքի անսպառ գանձերով, Աբովյանը վերագառնում է



հայրենիք, այդ հարստությունից իր յերկրին և ժողովրդին բառ ժին հանելու վառ հույսերով:

Թե ինչպիսի մեծ պաշարով, խորը գիտությամբ և լայն աշխարհայացքով եր Դորպատից նա հեռացել, յերեվում ե քրանս-սացի մի ճանապարհորդի ստորեկ բերվող խոսքերից. «Արովյանի հետ տեսություն ըրբ և ստուգիվ զարմացա իր հմտության վրա: Գերմանական վիլխոսովայության և զբագիտության տեսլիները իրեն այնքան ընտանի յեն, վոր նույնիսկ յեվրոպական մը ու գուտ կրնա քաղել իր կարծիքներեն: Շիլլերը ջուրի պես գետե, Լեսոփինի, Լեյպնիսի կարծիքները մաղե անցուցեր և և իր ասիական յերեվակայությունով անոնց նոր գույն մը կուտա: Գերմանացին մը չափ կիսուի գերմանիկ լեզուն և տարակույս չկա, վոր այս անձը հայ զբագիտության պատիվ պիտի ընե որ մը: Տարորինակ յերեվույթ մարդկային լուսավորության, հայու մը բերան արձագանք և այնպիսի տեսիներու, վոր մեր մեջ գեռ նոր կտարածվին: Շիլլերի, Լեսոփինի դրությունները կավկասի ւոներու մեջ հիաստատվին և լեզի կլլան և գեռ Յեվրոպայի մեջ ժողովուրդ կա, վոր այս հեղինակներու անունն անգամ լուսած չե: Զարմանալի բան պիտի ըլլա, յեթէ Ասիայի լուսավորությունը կավկասեն սկսի և Բըռմեթեյին ժայռը տեսնե իր շարչարանքին արդյունքը . . .»:

Բայց ավել, Արովյանի իգեալները, ժողովրդին ոգտակար լինելու քաղցր յերազները շուտով ջարդ ու փշուր յեղան՝ գիպչելով այն ժամանակվա մոայլ իրականության ահութի ժայռին:

Արովյանը փորձ արեց Եջմիածնում հիմնել դպրոց՝ գյուղական ուսուցիչներ պատրաստելու համար, սակայն տգետ Հովհանես կաթողիկոսը մերժեց նրա դիմումը, կոպտաբար պատասխանելով՝ «դու լավ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսու չե քո զործ»: Խոկ ագիտության մեջ վայրենացած վանականները ճիվաղային ծամածություններով և քրքիջներով ընդունեցին յերպաղական տարազով հագնված, բել ու մորուքը սափրած նախկին գլուխին: Խորտակված հույսերով ու անհուն վշտով Արովյանը թողեց Եջմիածինը և վերագարձավ Թթիլիսի: Այստեղ մի կիսավեր խցիկում նա մեկ և կես տարի ապրեց նյութական ծայրահեղ կարիքի մեջ, որվա հացի կարոտ և տպաստիպված յեղավ, հակառակ իր վորոշման, արքունական ծառաւթան մեջ համար և գեռ տվելին, քա-

յության մտնել տեղի գավառական դպրոցում՝ իբրև ուսուցիչ և տեսուչ: «ԱՄիպյալ ի չքափորությունն մտի ի պաշտոն արքունական, վոր յերեք կամեյի»:

Այդ տիրուք, հուսահատական որերին Արովյանը նազարյանին և հայանում իր վիշար. իր սրտակից բարեկամից նա ստանում ե հետեյալ պատասխանը, վոր հիանալի քնութագրում ե այն զարհութելի միջավայրը, ուր վիճակված եր գործելու Արովյանին:

«Այսպիսի հանգամանքներում շատ զգուշ պիտի լինել այն մարդկանց հետ հալրաբերություն ունենալիս, վորոնց հոգին հավիտենալիս կաղապարների մեջ սառել ե և ընդունակ չե բարձրանալու գեղի ճշմարտությունը: Ինարկե, գու այժմ ապրում ես մի վողորմելի չինական աշխարհում, ուր մարդիկ իրենց ամեն բանը մոլեսանգարար մեծ բան են կարծում և արհամարտում են ոտարը: Ինչ թշվառություն ապրել այնպիսի մարդկանց մեջ, վորոնք մտածելու աղատություն չունին, վորոնք իրենց կյանքը անսպառնի նման նախապաշարումների և մնուիսպաշտության շղթաներով բռնված առաջնային կամաց նույնագույթյունը ինքնապիտակցության են անցկացնում»:

Իր մի այլ նամակում նազարյանը հետեյալ սրտապնդիչ խոսքերն ե ուղղում Արովյանին, «Թող սիրտ չկոտրվի, այլ համբերությամբ և վճռականությամբ պնդանա մինչև քո առաջ ավելի լավ ապագա բացվի: Ավելի վսեմ բան չկա, վոչ մի տեղ մարդս այնքան մեջ չե յերեվում, ինչպիս գերակշող ուժի գեմ պատերազմելիս, ընդդեմ ըստ յերեւյթին անխուսափելի ճակատագրի կավելիու մի արդար գործի՝ իր արժանավորությունը համատելու համար»:

Սպակյան աշխատանքը Թթիլիսիի գավառական դպրոցում իր միխթարական կողմը ևս ուներ: Արովյանը 200 աշակերտների շրջապատում իրեն զգում եր յերջանիկ: Իր աղքակիցներին և յերկրացիներին կրթելն ու դաստիարակելին Արովյանը մեծ բախտավորություն է համարում: Ակադեմիկոս Ֆրենին ուղած նրա մի նամակում տոված ե. «Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր յերկրային սրտահաճ՝ բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն ե յեղել: Մանուկներին կըթելը աշխարհիս յերեսին ամեն բան ե ինձ համար և գեռ տվելին, քա-

Նի վոր սրանց մեծագույն մասը իմ ազգակիցներն են, իսկ մլուները՝ վրացի ու թաթար իմ յերկրակիցները»:

Նա բառիս խսկական իմաստով մանկավարժ եր, կոչված այդ ասպարեզի համար; Արովյանի համար մանկավարժությունը մի սիրելի գործ եր, մանուկների աշխարհը մի հոգեհարազատ միջամայր, մի զովաշունչ ուղիս այն ժամանակավա իրականության հեղձուկ անապատում: Յարական անսիրս չինովնիկների և խավարամոլ հայ կղերի տիրապետության դաժան պայմաններում նա իր զան որերի կարճատեվ ուրախությունը, խավարով ըրջապատված իր կայանքի լուսափոր բռպեները անց և կացը մանուկների կենսախինդ ըրջապատում, նրանց աշխարհումն և մոռացել իր գեմ նյութվող անթիվ դավերն ու հալածանքները: Արովյանը ամենաքնքույշ հայրական սեր ու փայփայանք և տվել իր աշակերտներին և չեղոմացել նրանց անկեղծ ու անկաշառ սիրով:

Կարծեք իր զավակներին ջերմորեն սիրող ծնողի բերնից դուրս յեկած լինեն Արովյանի ստորեկ բերվող խոսքերն, ուղղված իր աշակերտներին. «բաւը թէ զերեղմանումը եղ ջեր սերը մըտքիցս զնա, այ իմ սիրելիք, իմ ազիղ բարեկամք, թէ չե, վորքան ես կապույտ յերկինքը գլխիս ա, շունչս բերնումս, Զեղ, Զեղ սուրբ պետք և համարեմ ինձ համար, Զեր արեվին մեննեմ»: «Ռւսուցիչ սիրե զաշակերտն վորպիս հայր զվորդի», — ասում ե Արովյանը, այս սկզբունքը լովագույն կիրառում և դաել հենց իրեն մոտ:

Մանուկների կրթության և դաստիարակության գործն Արովյանի համար յեղել եայրող հարց, մեր ժողովրդի լավ որվա ու յերջանիկ զալիքի հայոր նա նոր սերնդի հետ և կատել և նրանից և սպասել ամեն մի բարիք: Նոր սերունդն ստեղծագործական ներշնչում ու թափչք և տվել Արովյանին: Սակայն իսկական մանկավարժի այս լավագույն հատկությունները վոչ միայն բավարություն չեն տվել ժամանակի պաշտօնական փոփուն, այլ և Արովյանի դեմ են զբանը նրա աշխատակիցներին: Երան ըրջապատող նախանձոտ շինովնիկների նյութած մշտական դավերն Արովյանին հանգիստ չեն տվել: Արովյանը ստուկումով և լցվել իմանալով, վոր Անդրկովկասի զպրոցների տեսուչ և նշանակված հայությաց Դեմինտիյելը, վորի հետ նա թշնամական հայրաբությունների մեջ եր: Յընենին ուղղած նույն նամակում

այդ առթիվ Արովյանը գրում ե. «Սա (Դեմինտիելը) պատճառել ե ինձ բավականաչափ վիրավորանքներ, վոր բնականաբար մեր հարաբերության մեջ կարող ելին տեղի ունենալ: Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջին, բայց գիւտավես հայերը և յետ առանձնապես: Յես բնավ չեմ կարող սրա խծրծանքը տանել»:

Արովյանի մանկավարժական գործունեյությունն ընթացել ե տեղական ժողովուրդների՝ հայերի, վրացիների և աղքարեջանց ցիների սեփական կուլտուրան զարգացնելու նշանաբանի տակ: Անշուշա այս խնդրում նրան զազափարական աշակցություն են ցույց տվել աղքարեջանական նշանավոր զրույներ՝ Միրզա-Փաթավի Ախունդովը և Միրզա-Շափին, վորոնք Արովյանի պաշտոնական հայերն ուույն դպրոցում:

Այս տեսակետից ուշագրավ փաստաթուղթ և Արովյանի դիմումը Անդրկովկասիան զպրոցների վարչությանը, Թբիլիսիի գավառական զպրոցում՝ առաջին խել զասարանից հայերեն և վրացերեն անցնելու մասին:

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ԲԱՐԵԾՆՆԴՈՒԹՅԱՆ,

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴՊՐՈՑԵՐԻ ԴԻՔԵԿՏՈՐ, ԱՐՔՈՒԵՆԻ
ԽՈՐՀՈՒԱԿԱՆ ՅԵՎԳԵՆԻԵՎ ՌՍԻԹՈՎԻՉ ՀԱՍՍԵՆ ՄԻԼԼԵՐԻՆ
Թիֆլիսի գավառական գպրացի հաստիքավոր տեսչից

Ր. Ա. Պ Ո Բ Տ

Ինձ հանձնված գպրոցի աշակերտների ծնողներից շատերը, և մինչև իսկ կարելի յետեր ամենքը ինդրում են ինձ, վոր առաջին զասարանում զասարարի իրենց զավակներին՝ հայու վրաց լեզուները: Նրանց այդպիսի ցանկության բավարարություն տալու համար, ցանկություն, վոր բարի նպատակ ունի այն մտքով, վոր բարձր զասարան փոխադրված աշակերտները հետագայում գծվարություն են քաշում այդ լեզուների գիտության մեջ, վորոնք չեն դասարպել առաջին դասարանում:

Յես, համակերպվելով հասարակության ցանկությանը, նաև մանականդ վոր տեղիս գավառական գպրոցի աշակերտները մեծ մասով հայեր են, հարկավոր եմ համարում այդ մասին

հարգանոք զեկուցել Զերդ բարեհննդության և խոնարհաբար խնդրել թույլ տալ դաստիարակության հայ և վըսց լեզուները, ինչպես վոր այդ կատարվում է մյուս դպրոցներում:

Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր
տեսչի պաշտոնակատար Խ. Ա.ԲՈՎՅԱՆ

Պայքարելով հաճուն-մեղական ժողովություների և նրանց կուլտուրական շահերի, Արովյանն իր համար կովան և ընտրել հասարակությունը:

Խոսելով ծնողների անունից, անշրջուշտ Արովյանն ավելի համարձակ և դառել և նրա խոսքը հնչել և առավել ծանրակշիռ ու ազգեցիկ: Անդրկովկասյան դպրոցների վարչությունը վերջ ի վերջո հարգել և Արովյանի խոնդիրքը:

Իրենի ազնիվ մարդ և հանգուգն քաղաքացի Արովյանն անհաշտ վերաբերմունք և ցուցաբերել իշխանավորների կամացականությունների նկատմամբ, վորի պատճառով մեծապես տուժել է:

Պիտի ասել, վոր իբրեւ տեսուչ, նշանակում և իրենի ցարական պաշտոնյա, նա անբավարար հատկությունների տեր և ճանաչվել, վորի պատճառով և 1843 թվին արձակվել և պաշտոնից:

Թբիլիսի գավառական դպրոցում աշխատանքի անցնելուն պես, Արովյանն իր տանը հիմնում և մասնավոր պանսիոն, վորտեղ սովորում են գերազանցապես հայ յերեխաներ: Սկզբում նրանց թիվը փոքր եր, սակայն 1839-ին, յերբ Արովյանն ամուսնանում և գերմանուելի Եմիլիա Լոռողենի հետ, նրա հնարավորությունները լայնանում են և դրա հետ մեկտեղ մեծանում ե աշակերտաների թիվը, համեմելով 25-ի:

Պահանջոն այն ասողարեկն եր, վորտեղ Արովյանը մի վորշ ժամանակ, հսկող աչքից հեռու, կարողացավ ազատորեն կիրառել իր մանկավարժական հայացքները, ըստ ամենայնի հասնելով խոշոր եֆեկտի: Ահա թե ինչ և գրել Արովյանի պահսին մասին գիտնական-ճանապարհորդ Մորից Վագները. «Այս դպրոցը շատ անդամ գացի ու հայ տղոց հառաջապիմությանը վրա շատ զարմացաւ: Տասը, տասնուշորս տարվան տղաքաղեկ կը կարգան ու կը գրեն հայերեն, վրացերեն, թաթարե-

րեն, ոռուսերեն, գերմաներեն ու գաղղիերեն: Մտուզիվ շատ զարմացաւ, գերմաներեն աղեկ շեշտելով կը խսուելին ու վարպետին իմ առջևիս գրել տված բաներեն տեսա, վոր գերմաներեն լեզվին կազմության աղեկ տեղյակ ելին, իմ առջևիս կեթելին ու Շիլերին գործքերը՝ կարգացին: Ամեն անդամ աս դպրոցը գալուս ու աս կայտառ տղաքը տեսնելու միջ ուրախություն կը գագախի, մանավանդ իրենց բարեկամական ու ընտանեկան վարմունքը, քաղաքավարությունն ու վարժությունը զիս շատ կուրախացներ: Իրենց վարպետին վրա շատ սեր ունելին, վորովհետեղ թե կրթության ու գիտության միջ հառաջացնելու և թե իրենց հանգատությունը հոգալու շատ փուլիթ կտանիք: Վերոհիշյալ առղերից միանգամայն պարզ և դառնում, վոր այսպիսի փայլուն հետեւվանքի համար Արովյանը գործադրել և լավագույն մանկավարժի իր բոլոր հատկությունները, իր վողյանը ու սերը, իր հսկայական կուլտուրան, հարուստ և բազմակողմանի գիտելիքները:

Շատ չանցած, սակայն, համապատասխան պաշտոնական մարմիններն սկսեցին տագնապի ազգանշաններ տալ արգելքաներ հարուցել գործը հասցնելով այնտեղ վոր Արովյանը ստիպված յեղավ մի առ ժամանակ փակել պանսիոնը: Սակայն համառ ջանքերով նրան հաջողվեց ձեռք բերել պաշտոնական թույլտվություն և կրկին բացել այս: Այս անդամ պանսիոնն իր գոյությունը պահպանեց մինչեւ 1843 թվականը, մինչեւ Արովյանի հեռանալը Թբիլիսիից:

Միենույն ժամանակ մեր հեղինակին մաշել են կյանքի այլ ձախորդ հանգամանքներ: Նրա գործադրած բուռն ջանքերը կազմակի համալսարանի հայագիտության ամբիոնը ստանանալու համար՝ ի գերեւ յելան:

Մերժված ու հալածված սեփական յերկրում, իր իսկ հայրենակիցներից, իր իդեալների իրագործման հույսը Արովյանը մի պահ կապում և կազմակի համալսարանի հետ: Այնտեղ, հոյագիտական ամբիոնի միջոցով նա մտածում եր կազմեր պատրաստել հայրենիքում գործելու համար: Այդ նպատակով Արովյանն Ակադեմիային ներկայացրեց իր յերեք աշխատությունները, («Նախաշավիդ կրթության», «Թերականություն» ըստ Տապուհի և այլն), վորոնք աշխարհաբար գրված լինելու պատճառով գիշ

տական չամարվեցին: Այս, ինչ վոր Արովյանի մոտ նոր եր, այն, ինչ հեղինակի կարծիքով ամենակարելորն եր ու անհրաժեշտը պաշտոնական գիտության և գիտնականի համար, արժեք չեր ներկայացնում: «Բայց յես ամեն բանից ավելի պիտի ցավեյիր, գրում ե Արովյանը ակ, Ֆրենին, —յեթե Ակադեմիան նըստանց նպատակի մեջ չժամանցեր և թողներ, վոր խեղա ժողովուրդը ցերեկը խավարի մեջ ըջեր: Յես կարող եմ զբարար գրել բայց պետք ենախ իրականացնել այն, վոր անհրաժեշտություն ե»: Արովյանը ուշ գլուխ ընկապէ, վոր այն, ինչ իր յերկրի, իր ժողովրդի համար հրատապ անհրաժեշտություն եր հանդիսանում, բոլորովին ել հարկավոր չեր նրանց, ում վոր նա զիմում եր այնպիսի անկեղծ պարզամտությամբ: Հայկական դպրոցների համար կազմած «Նախաշավիղ կրթության» աշխարհաբար դասագիրքը Թբիլսիի գիմնազիայի ուսուցչական խորհրդի կողմից ևս հավանություն չդտավ այն պատճառով, վոր այդ գրված եր «ուսմկական» լեզվով և մեղանչում եր գրաբարի վոգու դեմ:

Այս մաշող ցավերի մեջ, ձնշող այս ծանր ըետի տակ Արովյանն ունեցավ մի անորինակ բեղմնավոր զբական գործունեյություն: Սակայն ստեղծագործական աշխատանքը վոչ միայն չի մխիթարում, այլ առավել ևս խորացնում են բա ապրած վողբերգությունը, ավելի ցայտուն դարձնում ժամանակի սահմանափակ վոգու և իր իդեալների միջել բացված անդունքը: Նա ստեղծագործում է առանց համոզված լինելու իր գործի հաղթանակին, առանց հավատալու գրողի փառքին:

1843 թվին Արովյանը տեղափոխվում ե Ցերեվան, նշանակվելով տեղի զավառական դպրոցի տեսուչ: Այստեղ ևս շարունակվում են նույն զավերն ու մեքենայությունները, ինչ վոր Թբիլսիում եր: Արովյանին շրջապատում եյին մանկավարժական գործին չինովովիկական անտարբերությամբ վերաբերվող, այդ առաջնորդի համար պատահական և միանդամայն անպետք մարդեկ:

Ակադեմիսու Ֆրենին ուղղած իր 1847 թվակիր նամակում Արովյանը գրում ե: «Այս, յեթե միայն պարոն մինիստրը կամենար գիտենալ, թե ինչ գրության մեջ են այստեղի դպրոցները, Միայն ավելորդ փող ե, վոր կորցնում ե սըքունիքը,

իսկ պատահները խորտակում են սիրուն ժամանակը... թե խոսում ես այդ մասին, քեզ հալածում են, վորպես աղանդավորի, չես խոսում ստացվում ե խայտառակ մի զրություն: քո աչքի առաջ, տարեցտարի վոտքի տակ են տրվում արքունիքի և քո իսկ հայելունիքի շահերը: Վոչ թե ուսուցչիների ոռճիկը բարձրացնելով, վոր պետք ե վերջ զրվի անտահնելի այդ զրությանը, այլ բարվոք կազմակերպություն մացնելով, բանկմաց մարդիկ նշանակելով, իրենց գործը սիրով ու յենանդով առաջ տանողներին խրախուսելով: Եվիլական խոսք եմ տվել հանտանողներին խրախուսելով: Պարսիկական գաստիարակչին ու բարեգուցյալ Պարսուան, անմոռանալի իմ գաստիարակչին ու բարեկամին, չթողնել յերբեք ուսուցչական ասպարեզը, անգամ յեթե կամին, չթողնել յերբեք ստացչական ասպարեզը, անգամ յեթե կամին իսկ բացվելու վիճի իմ առաջ: Այս ամենահրապուրիչ կարիքերն իսկ բացվելու վիճի իմ առաջ: Այսուամենայնիվ հիմա գրեթե ստիպված եմ անկելու այդ քայլը, քանի վոր տասն ու մեկ տարի յե տեսնում եմ այս սուտինան քանի վոր տասն ու մեկ տարի յե տեսնում եմ այս մենակ 500 և անկարող եմ վորյեվե բան անել զրա գեմ: Լավ և մենակ 500 աշակերտ ունենաս, քան կրթություն տասն 50 աշակերտի, 5 ուսուցչով, վորոնք վոչ մի բանի պետք չեն»:

Արովյանը փաստը չեր չտիպազնցնում: Խիստ արժեքավոր ե մանափանդ կարլ Կոլիք վկայությունը: «Մինչեվ հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, վորը նման սիւնով ու այնպիսի հոգատարությամբ նվիրված վիճեր ժամանուկներով ու այնպիսի գործին, ինչպես վոր Արովյանն ե: Սարի դաստիարակության գործին, ինչպես վոր Արովյանին չեն ցույց տալիս արժանի վեկայյն, դժբախտաբար, Արովյանին չեն ցույց տալիս արժանի վերաբերմունքը: Զինովիկիների նեղութությունը հաճախ ու շատ է խանգարում նրան առաջ տանելու իր ազնիվ ու բոււն ձըգտումները: Յեթե Արովյանը, իրեւի Յերեվանի գաֆառային գպրոցի տեսուչ, մաս կարողանար իր գործունեյության ներկա դպրոցի տեսուչ, մաս կարողանար իր գործունեյության ներկա շրջանի մեջ, յեթե նրան գործոն աշակցություն ցույց տան իւրեն յենթակա պաշտոնյաները, այլ և պահանջված չափով գնահատեն նրան, սպառիկ յե, վոր Յերեվանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով վոտնահարված հայ ժողովի համար»:

Պաշտոնակիցների շրջանում չգտնելով աջակիցները, Արովյանը գրութիւն սրացալ մարդիկ ե վորոնում հասարակության մեջ: Նա ջանք ե թափում ծնողներին մոպեցնել զարդարութիւն և համեմական ասպարակության ու դպրոցի միջն ստեղծված կապի վրա հիմնել

իր աշխատանքները։ Մակայն իզուրը։ Զարչիական վոգու բացարձակ տիրապետության այդ պայմաններում, զրամական շահը գերազամում եր ամեն ինչից։ Շահի և տեղելից վազող զործարը վաճառականն իր յերեխաների կրթությամբ զբաղվելը պարագ գործ եր համարում։ Դնալով ավելի և ավելի հաճախակի երին դառնում Աբովյանի ընդհարումները քաղաքում «Հարգված» չարչիական Եղևող խավի, հոգեվոր իշխանությունների, պաշտոնական մարմինների և բարձրաստիճան անձանց հետ։

Աբովյանն ապրում եր Խոռվահույզ և լարված հոգեվիճակ։ Կոնֆլիկտը այն աստիճան է սրվում, վոր նրան համակում ե իշխանության կողմից ձերբակալվելու և աքսորվելու յերկյուղը։ Իր աշակերտ Գեորգ Գեղամյանին գրած մի նամակում նա վորոշակի կերպով խոռում է այդ յերկյուղի մասին։ Մարսափը ցարական ժանդարմերիայից վաղուց եր բուն գրել Աբովյանի մեջ։ «Թուրքի աղջեկը» պատմվածքում նա գրում է. «Կոր լսում ելի, թե մեկ մարդի պատիծ տվին, յա բանալ քցեցին, վոր ասում ելին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա եկել վոր յերկը հավան քննի իմանա, վոր կուսակալիցը, յա նախաւրացիցը (մինհստրեցը) մեկ թուղթ եր գալիս, վոր կառավարությունիցը (դիրեկցիցը) ստոռոծը գիրքը կոնստակին աչքիս չեր յերեվում, ենտես ելի սարսափում, կարծում, թե ևս ա, իմ վերջի որը հասել, մոտեցել ա, իմ արած չարությունը լիս ընկել, Պետքը սերգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից զանգատով լցովել են, իմ բարեկամք ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք ե տանեն սաղսաղ թաղեն, յա կախ տան»։

Ժամանակից առաջ ծնված մարդու տրագեդիան Աբովյանը Յերեվանում ապրեց ավելի խորն ու ցավագին կերպով։

Մանավանդ խիստ զգալի յեղակ նրա համար Ներսես Աշտարակեցու հասցրած վիրավորանքը։ Կաթողիկոսը չհարգեց Աբովյանի խնդիրը, չկամեցավ նրա աշակերտներից մի քանիսին արտասահման ուղարկել բարձրագույն կրթություն ստանալու։ Կաթողիկոսից մերժված Աբովյանը վրդովմունքի փայլն աչքերին, արտասունքները կուլ տալով վերագարձավ հուսախար անելու ուրախ համբավի սպասող իր աշակերտներին։ Հարվածը խիստ եր, հիասթափությունը՝ կատարյալ։ Ան-

կարագը ելի ծանր եր Աբովյանի վիճակը մանավանդ կյանակարագը ելի վերջին ամիսներին։ Նա թողնում է Յերեվանի գավառական քաղաքությունը, ստանձնելու համար Ներսոսյան դպրոցի տեսչի պաշտպացը, ստուգի նրան խոստացել եր կաթողիկոսը… Սակայն այս տոնը, վոր նրան խոստացել եր կաթողիկոսը… Սակայն այս տակելու համար Ներսես Աշտարակեցին դրժում է իր խոսքը… տակելու համար։ Ներսես Աշտարակեցին դրժում է իր խոսքը…

Յեվ այսպիս, Աբովյանի բոլոր փորձերն ու ձեռնարկումները ի գերե յելան, բոլոր ծրագրերը խորատակվեցին։ Նա տեսավ իր շուրջը վհատեցուցիչ անտարբերություն, բայց հույսի վաշ մի նշույլ, լույսի վոչ մի շող։

Աբովյանին վիճակված եր սկսել և առաջ տանել ժողովրդի լուսավորության պատվաքեր գործն ամենածանր ժամանակնեւ լուսավորություն ամենածանր ժամանակի հըսրում, նա ստիպված եր մենակ մաքառել խավարամիտների հըսրակայական բանակի գեմ։ Խիստ անհավասար եր ուժերի հարաբերությունը…

Աբովյանն ապրեց մի խորը, գեռ ևս լիովին չպարզաբանված վորեբերգություն։ Նա ապրեց մոռայլ գիշերի անփարատ խավարում և այդ խավարին կուլ գնաց նրա լուսավոր ու պայծառ կյանքը։

Դեպի մահ տանող հուսահատության ծնունդ ե Աբովյանի «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» բանաստեղծությունը։

Մնաք բարով, մնաք՝ անց կացած որեր։

Մոռացիր՝ աշխար՝ քեզ տված ցավեր։

Վորդիք, ընտանիք, հուր եք գուք լալիս,

Մարմինս թե փթի, սիրե ձեզ հոգիս։

Ես ճամփեն մեկ որ պետք ե մենք գնանք,

Մահով են կյանքին հասնենք, գինջանանք։

Բայց մեռնիլ յես վոր շուտ ուզում չեյի,

Պետքը գամ ազդիս, մի՝ ասում ելի։

Վնչ յերկար ապրելն եր իմ ուզածը,

Վնչ լավ որ քաշին՝ իմ՝ իմ խնդրածը,

Իմ են քաշած շունչն ել մահ եր աչքիս,

Յերբ չեյի կարում պետք գալ ազգիս։

Իշխանություն թե, կամ փառք ուզեցի,

Թագի, պսակի թե փափագեցի,

Ենառուք համար միայն, վոր հաղար մարդի
Աշքի արտասունքն սրբեմ, վոր չցավի:

Փակ եր աշխարհն, սեղ իմ քաշած որս,
Վոր ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրս վոր,
Արարիչ իմ տեր՝ թե մարդ չիմանա,
Իմ աղոթքն ես եր, քեզ լավ հայոնի ա:

Մարդիք, ալ՝ մարդիք՝ զուք յերը կզարթնիք,
Վոր սիրտ սրտի տաք, միմյանց քռմակ ըլիք:
Իմանաք, մեր գրախտն ու կյանքն հենց են ա,
Ով վոր խեղճ ազգի ցավը կիմանա:

1848 թվի ապրիլի 2-ին վաղ առավոտյան զուրս գալով
անից Աբովյանն այլևս չվերագրածավ: Ուր գնաց, անդարձ
կորսայան ինչպիսի հանապարհով—անհայտ է: Անլուծելի առեղծը-
ված և Աբովյանի կյանքի վախճանը:

Անհայտանալուց 3 որ առաջ նա տիսուր խոհերի մեջ ե ըն-
կել վոչինչ չի կերել քիչ ե խոսել, չի հանգել և տանջվել ե
անքնությունից: Ի՞նչպիսի մոայլ խոհերով եր լցված նրա գլու-
խը և ինչ փոթորկով հուզված նրա զբայուն սիրտը: Իր վար-
դագույն յերազների անդարձ կորստից եր հուսահատված, թե
իր գեմ նյութվող նոր զավերից խոցված... Յեվ մեկը, և մյու-
սը... Ամենասոսկալին այն եր, վոր չգտնվեց մեկը, վոր բաժա-
ներ նրա անկուր վիշտը, վոչ մի հոգեհարազար բարեկամ, վհշ
վոք հոգի ջերմացնող, հուսադրով մի խոսք չասաց նրան: Ինչ-
պիսի անկատար իգձեր տարավ նա իր հետ...:

Աբովյանի կործանումը եպիխատական մի տկա չեր, այլ
հուսահատ բողոքի արտահայտություն: Զկամենալով համակերպ-
վել ժամանակի պաշտոնական վոգուն, գլուխ ծռել կղերի և
ռեակցիայի առաջ, հավանաբար անձնասպանությամբ ել վերջ
տվեց նա իր կյանքին:

Եվ յու հարվածարա և խօսի նախանոր ով հայրածութ յունի
կանոնի ովմ ով մերգան ովհանդր և ովդը ովմ ովացնը
մերգան ովով մերգանը ով ովութ խօսութը նախանդու
մերցարու խօսութ օվութ ովութ անդը ովութ ովութ
մաքանութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ
Ապանութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ
Ապանութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ
Ապանութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ
Ապանութ ովութ ովութ ովութ ովութ ովութ ովութ

ՍՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ է, հարուստ ու բազմազան Աբովյանի թողած գրական
ավանդը: Բացափիկ է նրա ժառանգության նշանակությունը
հայ գրականության մեջ: Աբովյանը բազմաժամկետ հեղինակ է:
նա գրել է վեպ, պատմվածք, պիճու, առակ բանաստեղծություն,

Աբովյանն է հայերեն աշխարհաբար գասագրքերի առաջին
հեղինակը և մանկական առաջին գրողը: Նա գրել է և հասա-
կավորների, և՝ մանուկների համար: Ամեն դեպքում ել նկատի-
յի ունեցել ժողովուրդը, նրա կուտարական մակարդակը, ճաշու-
կը, հետաքրքրության առարկան: «Կարելի ա թե շատ բառ, շատ
խոսք քիչ մի ծանր թիվ, բայց այլ ձևով հսար չի կար, չունքի
բանն ինպիս պատի շինած, գրած, վոր կարգացողի սրտովն ըլլի:
Շատ մութը լեզվով զրիլ ենպիս եմ կարծում, թե մեր խալին
դիր չի գալ»: Աբովյանը ժողովրդի մարդ եր, իր ստեղծագոր-
ծության ակունքներով ու վոգով սերտորեն կամփած նրա հետ:
Նա առաջինն ըլբանեց, վոր ժողովրդի հետ կապված արքասը
միայն կարող է լինել կինունակ, իսկական արվեստ: Ժողովրդի
վշտով, նրա ազատ, լուսավոր ու յերջանիկ կյանքի կարտուվ և
տոգորված Աբովյանի ստեղծագործությունը: Աբովյանը առա-
ջին գիտակցից, թե ինչ նշանակություն ունի ժողովրդական բա-
նահյուսության անսպառ ու ջինջ աղբյուրը, և ինքն աղանաբար
յամեց այդ կենառաբար, անմահական աղբյուրից:

Աբովյանը հիանալի գիտեր հայ և հարեան ժողովուրդների
ֆոլկորը: Նա վաղուց ի վեր սովորություն և ունեցել արջելու-
ժողովրդի մեջ, լսելու և զրի առնելու նրանց յերգերը, կրոցցները,
հեքիաթները:

Միրել և մանավանդ խոսեցնել ծերերին և իր գրվածքներ-
ի ուսում ուստագործել նրանցից լսածները: «Վերք Հայաստանի, վե-
պում կարելի յի ցուց տալ այլպիսի շատ կարիներ:
Հանդիս գալով այնպիսի ժամանակը յերբ մեր գրականու-
թյունը այսպիս նույնական է ու ազգայի ու սեպական ու հայութիւնը»

թյունը ներշնչված եր կրտնական վոդով և սպասարկում եր յեւ կեղեցուն, յերբ կղերը և կղերամիտ մարդիկ ճիգ եյին թափում արհեստական յեղանակով կյանք ու կենդանություն հալորդել վաղուց մեռած գրաքարին, աչքի առաջ ունենալով ժողովրդին, Նրա արգեն հրամայական դարձած պահանջներն ու շահերը, Ա-բովյանն անհաշտ պայքար սկսեց գրականության հին, վաղուց արդեն անպետքացած տրադիցիաների վեմ: Նա իր հոգու ամառողջ զրությամբ բողոքեց, վոր հին գրականության կողմից աչքաթող և արվել ժողովուրդն ու նրա կյանքը: «Ենչ կա յեկեղեւ վրա յա, աստծու ու սրբերի», — գլում ե Աբովյանը «Վերք չայաստանի» վեպի առաջարանում, քննադատելով մեր հին գրականության կեղծ գասական ուղղությունը, կրտնական սխով լաստիկ վոգին: Այդ նույն առաջարանում նա շեշտակի կերպով դնում է գրականությունը ժողովրդի շահերին ի սպաս բերելու ժողովրդի համար գրելու պահանջը: Աբովյանը ցանկանում է մոտ, մատչելի ու հարազատ լինել՝ միայն ժողովրդին, ծառա-յել «ազգին», իսկ ազգը նրա համար «հարիր հաղարն» եր: «Գրա-բառ տասը կի գրածը, թեկուղ մեկ քամու ջաղաց: Ախըր վոր աղ-գը են լեզվով չի խոսում, են լեզուն չի հասկանում, սաքի հենց բերնիցդ ել վոսկի վեր ածիր . . . : Տարիներ շարունակ Աբովյանն ունեցել ե ժողովրդին վորեւ ձեռվ ոգտակար լինելու ան-հուն ցանկություն, նրան իր միտքն ու իղձը, իր սերն ու սիր-տը հայտնելու բուռն վափագ, այս մաքով ե նա ապրել ու թե-վավորվել: Բայց այդ վազելորության լուսավոր ըստեներին հա-ջորդել ե հուսահատության մռայլ խավարը, քանի վոր նա իր առջեւ տեսել ե անանցելի խոչընդուաներ, անհաղթահարելի ար-գելքներ: «Վահ քանա՞յերեսուն տարուց ավելի աշ իմ ազիզ հեր, իմ սիրելի ազգ, վոր սիրոս կրտ աընկեր, երվում, փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուքը իմ աչքիցս, ախն ու սիր իմ բերնիցս չի պակում, այ իմ արյունակից բարեկամք, վոր մեկ միտքս ու մուլազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնելի»: «Բայց ախ՝ լեզու փակ եր, աչքս բաց, բերանս բանած, սիրոս խոր, ձեռս պակաս, լիզու կարճ, գանձ չունեյի, վոր դործով ցույց տայի ուղածս, անունս մեծ չեր՝ վոր ասածս տեղ հասնի, մեր գրքերն ել գրաբառ, մեր լեզուն ել անպատիվ, վոր սրտիս հապաթը խոսքով հայտնելի»:

Աբովյանը իշխանավոր չեր և վոչ ել հարուստ մեծատուն, սակայն նրան տրված եր խոսքով իր սրտի հասրաթն հայտնե-լու մի հզոր կարողություն, արվեստագետի շողողուն տաղանդ: Քայց հենց այստեղից ել սկսվում ե նրա վողբերգությունը: «Յես ել եյի ուղում՝ վոր ինձ վրա չծիծաղեն, չասեն կոպիտ ա, հիմար ա, վոր քերականություն, ճարտասանություն, տրամա-բանություն չդիտի, յես ել եյի ուղում, վոր ասեն. «Ոհ, ենպես խորը, խրթին շարադրել զիտի, վոր սատանան ել միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ. . . »:

Աբովյանը կանգնում է ծանու յերկնտրանքի առաջ. գլեւ աշխարհաբար, ժողովրդին հասկանալի լեզվով, «վոր մեր խալիի սրտովը ըլնի», զոհել անուն, փառք, ծաղրկել ու արհամարվել թէ հրաժարվել ժողովրդից, յերես դարձնել նրա շահերից, գրել գրաբար, մեծարվել և փառքի տիրանալ: «Եսպես բաները մտա-ծելով, որս ու ումբը մաշվել եր: Շատ անզամ ուղում եյի իմ ծելով, որս ու ումբը մաշվել եր: Շատ անզամ ուղում եյի իմ գլուխս մահու տամ, չեյի իմանում թե սրա չարեն ինչ կլինի: Թող լսողը հավատա, ամա ես ցալին ենպես եր սիրոս տոկել, վոր շատ անզամ գժվածի պես ընկնում եյի սար ու ձոր, ման գալիս, մտածում, ել յետ սիրոս լիքը տուն գալիս»:

Եյն ժամանակվա պայմաններում հեշտ չեր յելք գտներ բայց և անհնարին չեր այդ Աբովյանի համար: Յերկարատել ներ-քին պայմարից հետո հարցը լուծվեց հոգուտ աշխարհաբարի: Ժո-ղովրդի սերը հալթեց, «Թող ինձ այսունետեւ տգետ կանչեն, լե-զում բաց ա ելել իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թող արամաբանություն գիտեցողը իրեն համբյարի համար գրի, յես, քո կորսած, շվարած վորդին՝ քեզ համար»:

Յեվ այսպես, ընկնում ե վիպասանի լեզվի կապը, միտք կաշկանդող ողակը փշը ուղում ե, իսկ ժողովրդի և հայրենիքի սե-ր թելվալորում նրա ծով միտքն ու վառ յերեվակայությունը: Աբովյանը բանվում ե ստեղծագործական փողեվորության մի ա-նորինակ տենզով, ապրածն ու լամբը վերակենդանում ե նրա հիշողության մեջ, կրակ կարած հեղինակի զրիչը այրող խոս-քեր և արտազրում: Այդ չսասցող ջերմությունն ե, վոր անց-նում ե մեզ, յերբ յուրաքանչյուր անզամ կարգում ենք «Վերք հայաստանի»-ն:

Այսպիսի անորինակ ծանը ու ցավատանչ յերկունքով

ծնունդ առավ հայ նոր աշխարհիկ գրականության անդրանիկ, ուստի և ամենասիրելի գավակը՝ «Վերք Հայաստանի» անմահ գիրքը:

Հայ գրականության այդ նշանավոր տարեթիվը հանդիսացավ 1840 թվականը:

Արովյանն իր վեպում առաջին անգամ հոգի վեր հանող, ի խորոց սրտի խոռոք ասեց մեր ժողովրդին: Նա ապացուցեց, վոր «Ըստի ու խակ» աշխարհաբարով կարելի յե գատարկել մարդկային զգացմունքները, անհան ծովը, արտահայտել մարդկային մոռքի ամենանըբին շարժումները: Նա փայտուն կերպով իշխագործեց այն, ինչ վոր այնպես հրամայարար պահանջմում եր գրողից: Մեր, բարեկամություն, հայրենասիրություն, ծնող, զավակ, մտհ, մի խոռովով այն ամենը, ինչ վոր կազմում են մարդկային կյանքի բովանդակությունը, դառան Արովյանի ներշնչման, ստեղծագործության առարկաները:

Արովյանը վոչնչացրեց գրականության հին տրադիցիաները, ստեղծելով նոր սկզբունքները: Նա հեղեղի ուժով և սրբաթացությամբ առաջ տարավ մեր նոր գրականությունը, խորտակելով նրա ձանապարհին ընկած խոչընդառները, սրբելով, տանելով ինչ վոր հին եր ու փառձ:

Արովյանը բացեց հայ նոր գրականության բարեգուշակ գարունը...

Հայկական վեպի պատմության մեջ չենք կարող ցույց տալ այնպիսի մի գործ, վորն այս կամ այն չափով առնչվեր «Վերք Հայաստանի» վեպին և հանդիսանար դրա նախորդը: Այս իմաստով Արովյանի «Վերք Հայաստանի»-ն ավելի մի խիզախ թուիչք և, քան մեր գրականության որինաչափ զարգացման հետևանքը: Դա մի եպոնիա կազմող յերեվույթ եր, վոր շկուաստեղծեց և ամենցավ իր հետեւողները հանձին Պուշկանի, Արայանի, Թումանյանի և Խաչակյանի, գրողներ, վորոնք Արովյանի ժողովրդականները շարանակողը և զարգացնողը հանդիւսացման մեջ իրեւական կազմում են մեր նախագործը, վոր գալիք և մեր գրականության հեռավոր գործադրությունը: Մաս անցաւ մեր կազմությունը նախադասական գործադրությունը և առաջարկությունը պատմության մեջ առաջարկությունը: Վերքի միջոցով նոր ուժով ավանդվեց մեր նոր գրականությանը:

«Վերք Հայաստանի» վեպում պատկերված ե 19-րդ դարի 20-ական թվականների հայ իրականությունը: Դա Հայաստանի համար պատմական մի այնպիսի ծանր ժամանակաշրջան եր, յերբ այնտեղ ապրող ժողովուրդները, հատկապես հայերը, ծվատվում եյին պարսիկ սարդարների արյունուս ճիրաններում: Ժողովուրդն ապրում եր սարկուկան կյանքով, յերկիրը վեր եր ածվել տառապանքի մի զնդանի, ամեն ինչ յենթարկված եր Սարգարի քմահաճույքին, բոլոր սրբությունները վոտնահարվում եյին նրա ապորեն ցանկություններին բավարարություն տալու համար: «Վոչ տունն եր իրանը, վոչ ապրանքը, վոչ ջանը, վոչ ողուշաղը»: Իբրև բռնակալության սիմվոլ Արովյանը նկարագրում է Յերեղանի բերդը, այդ «հազար զիմանի գեվը», վոր կուլ և տվել տասնյակ հազար անմեղների: Չնայած ժողովրդի այն ժամանակավա իշխող խավերը՝ աղայությունն ու հոգեորականությունն ակամա համակերպված այդ բարբարոս կարգերին քարոզում եյին հնազանդությունն, բայց և այնպես ժողովուրդը չեր հաշովում իր վիճակի հետ, չեր ընկճառում բռնակալ ուժի առաջ: Ժողովրդի մեջ կային ըմբոստ վոգիներ, վորոնց անկարելի յեր ընկճել սրով և բանտով, նրանց վոգի և համարձակություն եր տալիս հայրենիքի և ժողովրդի աղատության գաղափարը: Աղասին հայ ժողովրդի հերոսության մարմնացումն եր Արովյանի համար:

Ահավասիկ «Վերք Հայաստանի» վեպի համառոտ բովանդակությունը:

Բարեկենդանի տօնին վիպասանի հայրենի գյուղը, Քանաքեռը, արտակարգ ուրախության մեջ և Յերիտասարդները Արագու գլխավորությամբ ջերկիցի յեն գուրս յեկել գլուղի կալերը, իսկ ծերերը ողաներում նստած կենացներ են մաղթում և զվարթացնող բաժակներ զատարկում: Բայց շուտով այս ընդհանուր ուրախությունն ընդհանուր սուզի յե փոխվում: Յերեղանի Սարգարի ֆառաշները չար գեվերի պես առասափ են տարածում վողջ գյուղում: Նրանք յեկել են Սարգարի հարեմը առնելու գեցիկ թագուհուն, իր անմիիթար ծնողի մինութարին: Մոր սիրտ մղկացնող հարայից զարհուրած գյուղացիք մոռանում են և

տուն, և ուրախություն։ Բայց հվ եր իր գլխից ձերք վերցրել
վոր պաշտպաներ նրանց, հվ կհանդիներ զեմ կանգնելու Սար-
դարի հրամանին։ «Սարդարի հրամանին սարը չի դիմանա»։

Այն պահին, յերբ ամբողջ գյուղն ահից քարացած դիտում
և Սարդարի ֆարաշների բարեարությունը, հանկարծ արծվի
սրբնթացությամբ հայտնվում ե հսկա Աղասին, սրի կատաղի
հարվածներով թոցնում ֆարաշներից մի քանիսի գլուխը, իսկ
մյուսներին փախուստի մատնում։ Աղասին մի խումբ ընկերնե-
րի հետ հսկանում ե Քանաքեռից։ Հայտնվելով մերթ այստեղ,
մերթ այնտեղ, նա քաջարար կովում ե ժողովրդի ստրկացնող-
ների և բանակալների դեմ։ Աղասու քաջերի թիվը գնալով մե-
ծանում ե, նրանք նվաճում են ընդհանուրի սերն ու համակ-
րանքը։ Վրա յե հասնում ոռուսական պատերազմը։ Միա-
նալով ոռուսական բանակին, Աղասին անսպասելի խորտակիչ
հարվածներ և հասցնում հակառակորդներին ու թուլացնում նը-
րանց ուժը։ Ոռուսական բանակի հետ Յերեվան մանելով, նա
շտապում ե ազատել նորը, վոր տառապում եր բերդում։ Հոր և
վորդու ջերմ գրկախանության պահին զնդանում թագնված
ֆարաշները սրախողին գետին են տապալում քաջ Աղասուն։
Հերոսի հոր ապրած անսահման ուրախությունը տեղի յե տալիս
խորը կակիծի։ Նա չի դիմանում վայրէկյանաբար իրար հաջորդող
այդ ծայրահեղ զգացմունքներին և նույն ըռպեյին անշնչացած
ընկնում ե վորդու դիմակի վրա։

«Կերք Հայաստանի» վեպում Արովյանին հուզում են հա-
րյուրավոր հարցեր, բազմաթիվ ու բազմազան այնպիսի խնդիր-
ներ, վորոնք հասունացած լինելով՝ իրենց շտապ լուծումն են
պահանջում։ Վիպասանը չի կարողանում նրանց կողքով ան-
տարբեր անցնել և այդ ե պատճառը, վոր նա հաճախ ընթեր-
ցողի ներողամտությունը խնդրելով, ընդհատում ե բուն պատ-
մությունը, շեղվում մերթ այս, մերթ այն հուզող հարցի կապակ-
ցությամբ և զիգզագ ու վորուն ճանապարհներով կրկին վե-
րադառնում հիմնական ուղուն։ «Լավ չի սկսած բանը թողնել ու
եսպես քարոզ ասել, յես ել գիտեմ, ամա սիրաս չի դիմանում,
ի՞նչ անեմ»։ Ժողովրդի վիշտը, անլուր տառապանքը հեղինակին
շատախոս ե դարձնում։ Երգում, կոկօւմ ե նրա սիրալ, շատ ան-
գամ նա անկարող ե լինում զսպել իրեն ու հույզերի տարերքին

անձնատուր յեղած գնում ե ու մեկ ել հանկարծ ուշքի գալիս։
«Բայց վայ ինձ, հեր հսաս, ուր տարավ ինձ իմ կսկիծը, իմ եր-
ված սիրալ լեզուս չի, վոր խոսում ա, հոգիս ա, վոր զգում ա,
ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքը առաջիս քան-
դվում, իմ սիրելի աղբոր աղի արտասուքը ու գառը սուրքը՝ սիր-
ալս երում խորովում։ Խնչակես բերնիս հուպ տամ. արինս քթովս
ա գուրս գալիս, աչքս կայծակին տալիս»։

Արովյանը հաճախ զիմում ե ընթերցողին, խոսում նրա հետ,
աղաչում-պաղատում նրան համովլելու, ձիգ ե անում իր հուզ-
մունքը նրան հաղորդելու, իրեն վշտակից ընկեր դարձնելու և
այդ կերպ մխիթարցիկելու։ Հեղինակը միշտ ընթերցողի հետ ե.
վոչ թե գրքի մեռած տառերն են խոսում, այլ ինքը, կենդանի
հեղինակն ե մեկ հետ զրուցում, մեղ պատմում մի հուզող վիշտ,
մեր ժողովրդի գլխով անցած գնացած մի ծանր պատմություն։
Հեղինակն ամենից շատ ե խոսում, բոլորի հետ հուզվում, ան-
ցող-դարձող գեղքերին նա չի կարողանում սառնասիրս նայել։
Նա վոչ միայն մարդկանց հետ ե խոսում, վոչ միայն մարդիք
են նրան մխիթարում, այլ և բնության հետ, բնությունն ել և
արձագանքում վիպասանի բուռն ալլրութիւններին։ Բնությունն Ա-
րովյանի զրչի տակ կենդանանում, լեզու յե առնում, սիրտ ու
զգացմունքներ, միտք ու խոներ ստանում ու խոսում նրա հետ։
Բնությունն ել հեղինակի հետ մեկ տեղ ուրախանում ե ու ուրիշ-
ում, նրա պիս անզուսպ կրքով բռնկվում չար մարդկանց ու
չար գործերի գեմ։ «Ամպերը ոխտը վլխանի վիշտի նման՝ յերկըն-
քիցը ճոլուակյեղած՝ վոր բերանը չեյին բաց անում, խփում, ու-
զում եյին վոր սաղ յերկինքը կում անեն, ծամեն, փշուր-փշուր
անեն ու ել յետ հազար թիքա արած ածեն անիրավ մարդի զլիխն՝
վոր վհչ յերկնքիցն ա պատկառում, վհչ աստվածանից վախե-
նում, վհչ ջուրը իրեն որինակ առնում, վհչ հողից մեկ խրատ
վերցնում, վհչ իր խեղ հոգու ներքին ձենը լսում»։

Զարը պատժող բնությունն անմեղին, խեղծին, թույլին, ան-
պաշտպանին հովանավորում, մոր պիս իր գրկում պատպա-
րում, թագցնում ե, նրա վիշտն ե լալիս, նրա սուլքն անում։
«Եերկինք, յերկիր, սար, ձոր՝ ականջ աչք խիել, լալիս, սուլ
եյին անում, դոշներին ծեծում, զլիներին տալիս, յերեսները
պոկում, պոմկում, ամպք ուղում եյին Խղարաքիլիսին վերեվ քա-

շն, անդունիք իրանց ծոցը քաշեն պահեն, քար ու հող իրար կտրատում, սպանում եյին...»:

Խճճված իրեն հուզող հարցերի լարիրինթոսում, նա հաճախ կորցնում և պատմության թելը, յերբեմ հակասում իրեն... Բայց կրկին տարերքի ուժգին՝ մղումով նա գտնում է կորցրած հունը:

«Վերք Հայաստանի»-ն Աբովյանը գրել է անսամելի կրքով, մեծ լարվածությամբ, առևս չունը պահած: Մտեղձափրծական այդ բուռն կրքի ու լարվածության ուժն արտահայտվել է նրա հախուռն վոճի, յերկար ու վոլորուն նախաղասությունների և անսովոր ու անորինակ պատկերների մեջ: Ցերեանի ըերգն ե նկարագրում, թե Զանգուն, ձմեռը թե ամառը, յերկիրն իր հարաշալիքաներով, թե յերկինքը փոթորկի ու կայծակնարության պահին, ուրախություն ե արտահայտում, թե վիշտ, հերոսների արտաքինն ե պատկերում, թե ներքինը—բոլորը, բոլորն այնքան յուրորինակ ձեռվ ե կատարվում, այնքան տարբեր ընդհանրացած, բազմաթիվ հեղինակների մոտ կրկալող միատեսակությունից, վոր յերբեք չի կարելի Աբովյանինը չճանաչել, ուրիշինի հետ շփոթել:

«Վերք Հայաստանի»-ն ստեղծվել է մի ժայթքումով, հրակայական տաղանդի և ծով զգացմունքի անսելի ուժով: Այսուղ մարդկային տարերքի ուժը մըցում է բնության ուժերի հետ—հեղեղի, փոթորկի կամ վորոտի հետ: Հուզականությունը վերը հաճախ այնպիսի չափերի յն համառւմ, վոր անհնարին և գառնում այն արտահայտել արձակի միջոցով, ուստի արձակը բնուականորեն վեր և ածվում չափածոյի: Այդ անցումը չի կատարվում հանկարծակի, այլ նախապատրաստվում է, հուզականությունն աստիճան առ սատիճան ածելով, բարձրանալով հասնում և այն կետին, վորից դեմք սլրողան փոխվում է պոեզիայի: Ամբողջությամբ վերցրած «Վերք Հայաստանի»-ն պոավել մի պոեմ ե, քան վեպ:

Աբովյանը «Վերք Հայաստանի»-ն գրելիս նախ և առաջ նկատի յեռնեցել այն, թե ի՞նչ ձեռվ, ի՞նչ կերպ եյին ժողովը դից սիրված աշուղները մեջլմաներում պատմում, շարագրութերնց զրուցները, հերոսական պատմությունները, վեպերը: Աբովյանն ուրիշ փափագ չուներ, քան ժողովրդին հասկանալի և հաճելի մի գործ հորինել: Իզուր չե, վոր նա իր վեպի առաջա-

րանում ասում ե, «Ասկցի ինձ ու ինձ, արի մեկ աշըլ եւ գուդառ իր կըլի կըլի»: Յեկ իբոք, հետեւելով աշուղների որինակին, նա իր վեպը պատմում է պարզ, բոլորին հասկանալի լեզվով: Հեղինակն իրեն զգում է աշուղի դերում, աշուղ, վորը մեջլմառնում նատած պատմում է իր վեպը և, ունկնդրող հասարակությանը թարմացնելու համար, մեջ լոնդ մեջ յերգում: Դրանով ե բացատրվում Աբովյանի վեպի յերգախառն լինելը:

Ժողովրդական ձեերից բացի, Աբովյանն ոգտվել է ֆրանսական և գերմանական կլասիկ գրականության, մասնավորապես Ռուսականի, Գյոթեյի և Շիլլերի փորձից: Աբեկելյան և արևմբայան կուլտուրաների մի հետաքրքիր ու յորորինակ խաչաձեման արդյունք և Վերք Հայաստանի»-ն, Աղասին, իբրև ծընունդ մեր իրականության կոնկրետ պատմաշրջանի, հիմնականում կերտված և արեկելյան ավանդավիապերի կիսալեզնդար հերոսների որինակով: Մյուս կողմից նա հիշեցնում է մերթհայրենի աշմառ մարտնչող Վիլհելմ Տելլին, մերթ բռնության և անարդարության դեմ ծառացող Կարլ Մոռըին և մերթ խորհրդածող ու թախծոտ Վերթերին, վոր ձգտում է հասկանալու բնության իմաստը, պարզելու բնության գործ ծառացող Կարլ Մերթը բռնության և անարդարության դեմ ծառացող Վերթերին, վոր ձգտում է հասկանալու բնության իմաստը, պարզելու բնության գործ համար և սրանց մեջ:

«Վերք Հայաստանին» մի գործ ե, վոր խարսխված և իրականության վրա: Դա պատմական վեպ և և իր մեջ անդրագարձնում և մի ամբողջ ժամանակաշրջան իր կարեվորագույն հարցերով, ժամանակի կողմից առաջալրած խնդիրներով, խնդիրներ, վորոնց հեղինակն իր ժամանակի համար հիմնականում միշտ—սեալիստական լուծում է տվել:

19-րդ դարի 20-ականն թվականների մեր ժողովրդի քաղաքական և տնտեսական վիճակն ու նրա պայքարն իր անկախության համար, նրա հեռավոր ու մոտիկ ձգտումներն իրհնց իրական արտահայտությունն են գտել այդ վեպում: Խորը ռեալականությամբ Աբովյանը տվել է հայ գյուղի տնտեսական և քաղաքական պատկերը և իր վեպի այդ կողմով հանդիսացել Պառշյանի և մեր մյուս գյուղագիքների ուսուցիչը: «Վերք Հայաստանի»-ում կենդանի գծերով տրված ե նաև Սարգսի Յերեանն իր քաղաքական և տնտեսական կյանքով ու բարքերով: Աբովյանն

առաջին հեղինակն է, վորապես լուսասուտական կապիտալի ու նրա ներկայացուցիչների բնորոշ գծերը, պարզել եքաղաքի և գյուղի փոխարարերությունը, նախատեսել այդ հարաբերության դարձացման տեսդեսցը—գյուղի ապագա քայլքայումը: Վերջապես պայքարը հանուն նոր լեզվի, նոր գրականության իրեն ժամանակի ունականը, իր ցայտուն արտահայտյան մեջ ու ժամանակի ունականը: Արդարությունն և գտել «Վերք»-ում: Ժողովրդի լեզուն իր հարստության ամբողջ պաշարով, իր պատկերավորությամբ, իմաստությամբ ու գեղեցկությամբ Արովյանի միջոցով մուտք գործելով ժամանակի ամենառելականության մեջ, իրագործեց ժամանակի ամենառելական մեջ:

Այս և Արովյանի վեպի այն առողջ կորիզը, վորից հետագայում աճեց հայ ուսալիստական վիպագրությունը:

Իր ելությամբ հանդիսանալով ուսալիստական դորձ, «Վերք Հայաստանի»-ն ուշի ուսմանտիզմի և սենտիմենտալիզմի ուժեղ շաղախ: Աղասին ուսմանտիկական մեթոդով ստեղծված գաղափարական հերոսի ցայտուն որինակներից մեկն ե մեր գրականության մեջ: Հեղինակը նրան ներկայացնում է իրիւ կատարելատիպ, ըստոր բարեմասնություններով ոժաված անթերի և անարտ մարդ: Իր չափազանց գածքը բաջագործություններով Աղասին յերեմն հիշեցնում է ժողովրդի անզուսպ յերեակայությամբ ըստեղծված դյուցազներությունների հերոսներին: Թագուհին իր արտակարգ գեղեցկությամբ և մյուս գծերով վեր և մարդկային յերեակայությունից: Զափի զգացումը Արովյանը կորցնում է մանավանդ իր հերոսների զգացմունքները նկարագրելիս: Նրանք հուզվում են և զգացվում վոչ սովորական ձևով: Աղասին, այդ աղառամեթ տղամարդը, յերեխայի պես արտասվում է ու հաճախ հուզմունքից ուշը կորցնում: Թագուհու մոր սուզը այդպիսի գերզգայնության գլուխ գործոց ե:

Արովյանի վեպի այս հատկություններն իրենց ժամանակին նոր և գրական յերեսույթներ ենին: Հակառակ կեղծ-զասական անկյանը ուղղության, ուսմանտիզմը և սենտիմենտալիզմը պրականությանը բերին կենդանի շունչ: Հարուստ զգացմունքներ և դիմամիկա:

Արովյանի վեպը պատկերում է կենդանի մարդուն իր հարուստ ներքնաշխարհով, նա ընթերցողի ուշադրությունը յերկ-

նային բնագավառներից հրավիրում և գեղի յերկիր, գեղի բնությունն, զարգացնում և բնության զգացում, բնության սեր, ստեղծում բնության կուլտ:

Գ

«Մարդի դրախտն ու կյանքը հենց են ա, վոր խեղճ ժողովրդի ցավը հասկանա...»,—ասում ե Արովյանն իր մի բանաստեղծության մեջ: Նրա կյանքի հշանաբանն ել այդ և յեղել Հայանցյալ գարի գրողներից քչերն են Արովյանի չափ խորը հասկացել ժողովրդի ցավը, նրա պես մոտ ու անմիջական կապեր ունեցել ժողովրդի հետ: Արովյանի ամենանշանավոր յերկի, «Վերք Հայաստանի» վեպի մեջ, Նալբանդյանի արտահայտությամբ, «մարմին և առել աղզի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»: Հայաստանի վերքը-հայ ժողովրդի կրած տառապաւնքն ե, վոր, ինչպես Թումանյանն ե ամել, «վերք գառավ, կպավ նրա սրտին»,

«Վերք Հայաստանի» վեպում գարեր առաջ իր անկախությունը կորցրած հայ ժողովուրդը առաջին անգամ ինքնաճանաչման և ինքնապիտակցման փորձ և անում: Խոշոր պետությունների արանքում տրորված, մոլորված ժողովուրդը կամենում և վորոշել իր տեղը, գերը մյուս ժողովուրդների և պետությունների շարքում, հանգես գալու վորպես ինքնուրույն ժողովուրդի շարքում և անգես գալու վալիքի հավատով ու հեռանկարով: Արովյանը նկարագրել է պատմական այնպիսի մի ժամանակաշրջան, յերբ հայ ժողովուրդը պարսիկ չյուսեին խանի բանակալ լծից պատագրվելը գարձնելով իր համար կյանքի և մահու խընդիր, ոգնություն և ստանում ուստական միապետությունից, ընդունում նրա տիրապետությունը, վոր պարսիկ սարդարների բարբարոսությունների և կամայականությունների համեմատությամբ անկասկած նվազ ծանր եր: Ռուսական տիրապետությունը, ինչպես Վրաստանի, նույնպես և Հայաստանի համար «չարիքի փոքրագույնն եր»:

«Վերք Հայաստանի» վեպով, ինչպես և իր բոլոր գործերով, Արովյանը ժողովրդի շահերի ջերմ պաշտպանն ե, նրա դարավոր իղձերի ու տեսչերի ամենախոր և անկեղծ արտահայտիչը: Ժողովրդի պայքարն ստար բոնակալների գեմ իր աղառության համար՝ ահա թե ինչն և վոգեվորել Արովյանին:

«Վերք Հայաստանի»-ն մի խոշոր սոցիալական յերկ է, վուրի մեջ իրենց գեղարվեստական արտահայտությունն ու լուսաբառնությունն են գտել ժամանակի այրող հարցերը, քաղաքական, հաստրակական, կուլտուրա-լուսավորական բոլոր խնդիրները, լուսաբանված եպօխայի. ամենաաստածավոր մաքի տեսանկյունով՝ Յեղողայում և Ռուսաստանում պլոտիքսիվ միտքը վազուց ի վեր ծառայում եր ֆեղալական ճնշող կապանքների վերջնական ու անվերագրձ վոչչացման գործին, շահագործող գասակարգերի դեմ ժողովրդի մզած պայքարի գործին: Մեզ մոտ, հայ կյանքի առանձնահատուկ պայմանների շնորհիվ, այլուրանդ, այլ գույն և ստանում կուլտուրական-լուսավորական շարժումը, այն կապվում և ազգային ազատագրական շարժման հետ, ծառայելով ժողովրդի քաղաքական շահերին: Լուսավորական հարցերը Արովյանի մոտ իրեն անկախ հարցեր վոյցություն չունեն, նրանք կապակցվում են ժողովրդի քաղաքական ազատության և այդ նպատակի համար մղվող պայքարի խնդիրների հետ: Այս իմաստով «Վերք Հայաստանի»-ն մի քաղաքական վեպ է, գրված հայ ժողովրդի ազգային կերպարանավորման տարիներին, գործ, վոր մեծապես նպաստեց նրա քաղաքական զարթոնքին, ազգային ինքնազիւտակցությանը և ինքնանահնաչմանը:

«Վերք Հայաստանի» վեպում Արովյանին զբաղեցնող հիմնական հարցը մեր ժողովրդի վիճակն է, նրա քաղաքական դրությունը. սակայն սրան զուգանես, իրենիվ սրանով պայմանավորված ածանցյալ խնդիրներ, նա հրապարակ է հանում «ազգի» լուսավորության, կուլտուրական մակարդակի բարձրացման, քաղաքական հորիզոնի լայնացման հարցերը, հարցեր, վորոնք իրենց հերթին առաջ են մղում նոր խնդիրներ՝ լեզու, գրականություն, դպրոց և այլն: Արովյանի խորը համոզմունքով հարցուրամյակներ բռնության ներքո տառապած ժողովրդին կարելի յե և անհրաժեշտ ե տեղական, համառ աշխատանքի միջոցով, նոր սերնդին կրթելու ճանապարհով զգաստացնել, նրա մեջ աղատության սեր վառել, պայքարի գիտակցություն արմատացնել: «Մինչև գարունը չփա, ծառ չի ծաղկիլ, առանց ամառի պտուղ չի ծանիլ, գու ուղում ես՝ վոր ձմեռվա են սաստիկ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնիս քո բաղումը, հասած պտուղ քաղես քո բաղչումը, եղ ելած բան ա, կամ կլի ըսկի Խեղին աղգին:

մինչև եսոր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտաւմը, վոր գես չի սաղացել, ենքան դառըն արտասուը ա կուլ տվեց վոր աշխումը լիս չկա, վոչ բերնումը համ, վոչ սրտումը յեղ, դու հենց ուղում ես՝ վոր հստոնք մեկ սհաթումը անց կենան, Բնչակես կինի»:

Արովյանը արդարացի զայրույթով դատապարտում է հոգեվորականությանը, վոր վոչ միայն չեր նպաստում ծողովրդի ազգային ինքնագիտակցությանը, այլ և բռնակալ ուժի հանգեց քարոզում եր քրիստոնեական հնազանդություն, սորկամտություն և համբերատարություն: Դեռ ավելին, կղերը հալածում եր բոլոր նրանց, ովել խաչի վոխարեն սուր եյին վերցնում, աղոթելու տեղ պայքարում, ում մեջ վառ եր ազատասիրության և հայրենասիրության ըմբռաս վոդին: «Քրիստոնեն սրով չի պետք և իր բանը յոլա տանի: Նրա թուրը իր համբերությունը ու հավատն ա՝ եղանակ արեց մեր են եղ զեղցի հիմար Աղասին ել, վոր մեկ աղջկա խաթեր թուր քաշեց ու խեղճ քանաքեցիք հնքան ջառմա տվին ու նրա հալըվոր հերը ու գեղի քեդիուղեք՝ եսա հինգ տարի ա բանտումը քոթիրումը չորանում, մաշվում են ու աստված գիտի թե վերջը ինչ կըի, ինքն ել գժի պես ընկել ա սարեսար չափմիշ անում, ճամբար կորում ու իր թշվաս որը եսպես անցկացնում: Ո՞վ ա գիտում, թե վոր քարի վրա գլուխը վեր կինի: ու ինչ տեղ շներոց, զելերոց կըի: Լամբեն չի, վոր մարդ գլուխն իրեն քաշի ու տաղ անի: չե, չե սիւ մեջ չի, վոր մարդ գլուխն իրեն քաշը ինչ կըի, ինքն ել գժի պես ընկել ա սարեսար չափմիշ անում, ճամբար կորում ու իր թշվաս որը եսպես անցկացնում: Ո՞վ ա գիտում, թե վոր քարի վրա գլուխը վեր կինի: ու ինչ տեղ շներոց, զելերոց կըի: Լամբեն չի, վոր մարդ գլուխն իրեն քաշի ու տաղ անի: չե, չե սիւ մեջ չի, վոր մարդ գլուխն իրեն քաշը ինչ կըի, ինքն ել գժի պետք կենանք, մինչև տեսնենք՝ թե բանն ինչ տեղ կըհանի: Քիչ հիտո ծանոթության կարգով Արովյանն ավելացնում ե, «Ես խոսակցությունը իմացողը կիմանա, թե ինչ եր մեր խեղճ նության պատճառը: ել յես չեմ ուղում բերանս բաց անել»:

Վանսականի զեմ առարկող աշխարհականը, վոր կեղինակի մտքերն ե արտահայտում, հետեյալն ե ասում: «Թուր վոր չու նիս՝ գլուխդ կտրում են, ողուցազդ քաշում, կերածդ հարամ ասում, զատածդ խլում, քեզ ել յեսիր անում, աշխարհն եսպես ա, ինչ կարաս անիլ: Աստված զշին, հայվանին ել՝ յա չանգ ա տըշ վել յա պող, յա ատամ, վոր չանկոի, հարու տա, կժի, իր գըշ լուխը պահի: Յեզ այսպես, սեփական անձի, ժողովրդի, յերկը

պաշտպանությունը մի բնական անհրաժեշտություն է, նույնաքան բնական ու անհրաժեշտ, վորքան յերկրի վրա ապահով կանք, յերկնքի տակ ազատ անկյուն ունենալը:

Ժողովրդի ազատությունը կգա նրա լուսավորության հետ: «Յարար վոր լավ կարգացող եր ելել յերեխանց ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր ցերեկ խրատ տվեր կարգացրել լուսավորել եր, հիմիկ մեր ազգը ես հալին կը եր»:

Ժողովրդի, հատկապես նրա նոր սերնդի լուսավորության խնդրի իրագործումը Արովյանը կապում ե մտավորականության հետ: Նա պիտի մաքրի քար ու տատասկը ժողովրդի լուսավորության ճանապարհց: Նա պիտի կործանի ժողովրդի կյանքը սահմանափակող չինական պարիսպները և անարգել ուղի բաց անի լույսի և գիտության առաջ: Սակայն, Արովյանը մի պահ հուսահատվում ե, տեսնելով ժամանակի մտավորականության սառն անտարբերությունը գեղի հասարակական կյանքը: Նա անխնա հարվածում ե կղերապահպահապահապահ պորտարույծ մտավորականության եղոխատական հակումները, սեփական բարեկեցության, շվայտության ձգտումները, նրանց ապականված կյանքը: «Այս, մեր կարգացողներ, մեր կարգացողներ, ի՞նչ կը մ վոր ինչքան ժամանակ քնի, քեզի հետ են անցկացնում, ավելի փողի թամահ անում, ենպես բանի թամահ անեն, մեղ լուսավորեն, իրանք ել թշնամուց-հարամուց ազատվեն, մեզ ել ազատեն»: «Այս հազար եսպիսի ցավեր կան սրտումս, համարեանս փակում են, չեմ կարում ասել», —դառը կսկիծով յեղափակում ե Արովյանը:

Մտավորականության հին սերնդից հուսախաբված վիպասանը հաստատուն հույսեր ե կապում նոր սերնդի հետ: Դիմելով նրան, Արովյանը թախանձագին խնդրում ե սիրել մայրենի լեզուն, վոր աղջի գոյության նախապայմանն ե, նրա կուլտուրայի հիմքը, ստեղծել աղջային գրականություն, իրբե մեր ժողովրդի ինքնության ապացույց, իրբե նրա գոյության իրավունք մյուս կուլտուրական ժողովրդների շարքում: «Զեզ հմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս յերիտասարդք՝ ձեր անունին մեռնեմ, ձեզ արելին դուրբան: Բայ չեք ուղիլ վոր դուք ել զըրքեր, աղջի միջում անուն թողաք, ձեր զրքերն ել ոտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա

անմահ»: Դժվար չե գուշակել թե վորքան խորը ազդած պիտի լինելին Արովյանի խոսքերը ժամանակի յերիտասարդ սերնդի վրա: Նա ինքն այդ սերնդի պարագլուխը հանդիսացավ, իր քառական գաղափարների առաջին առաջյալը գարձավ:

«Վերք Հայաստանի» վեպում արձարձիկել են հայ վերածնության շարժման համարյա ըոլոր հիմնական խնդիրները:

Ժամանակի առաջավոր մտավորականությունը նրա մեջ գտավ իրեն հուպող հարցերի պատասխանը: Հայտնի յի, թե ինչ գնացող տպավորություն գործեց ընթերցողների վրա «Վերք Հայաստանի»-ն սրանից մոտ 80 տարի առաջ: 1858 թ. ականավոր վիպասան Պերճ Պոռշանը «Վերք Հայաստանի»-ն կարդաց աննը կարգերի վոգեվորությամբ և նրա խորը աղքեցության ներքո կարգերի վոգեվորությամբ և նրա առաջ աղայական պատասխանը կարդաց աննը նկարական կապահանքները Արությունը և Մանվելը իրենց լուսավորական գաղափարները քաղում եին «Վերք Հայաստանի»-ից: Անկասկած ե, վոր շատ ավելի խոշոր կլիներ «Վերքի» դերն ու նշանակությունը, առավել խորն ու ուժգին նրա ներդրությունը, յեթե այն լույս տեսներ ժամանակին՝ 40-ական թվականների սկզբին, մինչդեռ նա լույս տեսավ 18 տարի հետո՝ 1858 թվականին:

Դ

Առաջ քաշելով մեր ժողովրդի ապագա վերածնության խընդիրները, Արովյանը հասարակական վիր խավի հետ և կապել իր հույսերը, ի՞նչ շահեր և հետապնդել: Գյուղացիության մեջ ե տեսել նա մեր կյանքի վերածնության առողջ սաղմերը, գյուղն ե համարել այն բջիջը, վորից պիտի առաջանար նոր կյանք: Արովյանը մերժում կապիտալիզմը, վոր իր հետ բերում եր շահագործում և քայլայում: Առեւրական կապիտալին նա հակադրում ե արդար յերկրագործությունը», վորով աշխատավորությունը պիտի հասներ ցանկալի յերջանկության: Արովյանի մի անտիպ աշխատության մեջ կարդում ենք հետեւյալը, «Վոչ կույր բախտը կամ չարչիություն, այլ արդար յերկրագործություն կարե հասուցանել դմարդն անհնարին հարստության և բախտավորության, յեթե միայն մարդն կարից պարագել նովավավ»: Հայ շինականին չկ

պակասում աշխատասիրությունը և յեռանդը, սակայն նա գուրել է կուլտուրայից, չփափի իր տնահասությունը կուլտուրական ձևով վարելու յեղանակը: «Եթիւականք հայոց, զբուժե Արովյանը նույն տեղում, —աշխատասեր են, միայն վոչ գիտեն գլերպն աշխատության»: Այս զբությունը լուրջ մատհովություն ե պատճառում Արովյանին, և նա իբրև ժողովրդի սրտակից բարեկամ, նրա տնտեսությունը բարձրացնելու համար ճանապարհներ ե վորոնում: 1845 թվին Արովյանը փորձ և անում գյուղերի համար բերել տալու բամբակի, ծխախոտի, քրփումի և կուլտուրական այլ բույսերի ընտար սերմեր, ինչպես նաև բամբակազտիչ մեքենա: Այս տեսակետից հետաքրքրական նյութ ե տալիս Արովյանի «Պատմություն Տիգրանի» մանկավարժական անտիպ վեպը: Այսուղի հողինակի կրթա-դաստիարակչական խնդիրներից մեկն ել յերեխաների, ինչպես յել նրանց ծնողների մեջ կուլտուրական գյուղատնտեսության պլոտազնդն ե: Ունենոր տընտեսատեր Դիվանբեզը այդ վիճակին հասել ե շնորհիվ այն խելացի ու նպատակահարմար միջոցների, փարոնք նա հմտորեն կիրառում ե իր տնտեսության մեջ: Դիվանբեզի տնտեսությունը բազմածյուղ ե: Նա չի արհամարտում մշակույթի վորեե տեսակ ե, վոր գլխավորն ե, նա գիտի անհրաժեշտ խնամք տանել հողի, բույսի, անառունի, թոչունի վրա և այլն:

Թեև 10 տարեկանից Արովյանը թողել ե գյուղը, սակայն յերբեք չի խորթացել նրան, մշտական սերտ կապի մեջ և յեղել յուրայինների և համագյուղացիների հետ, ողնութ և նրանց իր բարի խորհուրդներով ու խրախուսանքներով: Քանաքեցիների հիշողության մեջ յերկար ժամանակ վառ կերպով պահպանվել են նրա խորքերն ու զրոյցները: Անա Արովյանի չափաղանց բնորոշ զրոյցներից մեկը, վոր Ն. Տեր-Կարապետյանին հաղորդել ե մի քանաքեցի: «Գյուղական կյանքը գովելի կյանք ե, չպետք ե ձեռքից տալ: Մենք թեև ուստմական ենք, բայց կտաժամանակ, վոր կը կիլինք մեր վարած պաշտոններից և չենք կարող ապրել, քանի վոր անընդունակ դարձած լինելով, չենք կարող հողը մշակել վոր միակ միջոցն և կյանքի համար: Աշխատեցնք, ձեր հալալ աշխատանքը ձեռքից միք տալ: Վար ու ցանը պատվական արհեստ ե, աստված որհնել ե մշակի ձեռքի նեղությունը: Մենք մեր ղոնախների համար հարցութ ուրբի յենք

մսխում, վոչինչ լաղաթ չենք տեսնում, իսկ գուք ձեր ունեցած ծով շատ պարզ և ուրախ եք անցկացնում, քաղաքացիներին նախանձի ձգելով: Արանով չեմ ուզում ասել, վոր ձեր յերեխաներին հենց սկզբից տվեք միայն դաշտային աշխատանքի, վոչ դրանով նա կարող է ավելի հեշտ և լավ ապրել: Քետք ե յերկուառվս միանանք, այսինքն գուք դաշտայինը սովորացնեք, իսկ յես՝ գրքինը, այն ժամանակ յերջանիկ մարդիկ կունենանք»:

Մարդկային լավագույն բարեմանությունները՝ պարզություն, շիտակություն, անշահասիրություն, հյուրասիրություն, աշխատասիրություն—կազմում են զյուղացիության խարակութիւնների հիմնական գծերը: Իդեալականացնելով գյուղը, Արովյանը Ռուսացի պես ժիանողաբար և վիրաբերվում դեպի քաղաքը, տեսնելով այնտեղ միայն արատներ, ապականություն և շահագործում: Քաղաքում իշխում ե չարչիական վոգին, ժլատությունը: Հարստանալու, փող զիղելու տենչը սպանում և լավն ու մարդկայինը: «Նալլաթ» կարգալով փողին ու նրա կտրողին, Արովյանը փառարանում ե հողը, հողի վրա զործադրվող աղնիկ աշխատանքը, այդ աշխատանքի արգար պտուղները և զրանց գոհ ու յերջանիկ վայելողներին: Ահա թե ինչ ե տառմ Արովյանի գյուղացին: «Թեկուղ փողի համ առաջ՝ թեկուղ իր միսը կերած՝ հետաքարտ մեկ առ Տաշտումը հաց ունենամ, կարասումը զինի, Զվալումն ալիք՝ հերն անիծած վոր չիփլախ ել ըլիմ գարդ անեմ: Ոջախս լիքը ըլնի, տանըս բարաքյաթ, վորդիքս ուղղ սալամաթ, թնդ որը հազար մարդ մտնի, հազար մարդ զուրս զա, ինչ եմ հոգում, հացն աստծունն ա յես ել հետը, ով հասնի թնդ ուտի: Տերին փառք՝ տեղը հաշ շատ կա, աղերքս սալ ըլին, զանս ապրի: Գը զակս ծուռը կդնեմ, քեփս արամիշ կանեմ, ով թամբալ ա, թող նա զարդ անիր:

Այսուղի արտահայտված ե մի ամբողջական աշխարհայոցք: Գյուղացին չի մտածում կուտակելու մասին: Նա ազատ է հարստություն գիղելու ախտավոր, ու անընական կրքից: Նըանշատ բան հարկավոր չի իր ընտանիքի հեռավոր ու մոտիկ բարեկամի և ծանոթի, նույնիսկ պատահական անծանօթի հետ ամեն որ ուրախ ու առատ սեղան վայելու համար: Բնությունը վարձատրում ե նրա աշխատանքը, Աշխատավորը միշտ ել գտնում

ե իր որվա ապրուստը, իր մի կտոր հացը ու դրանով գոհ մնում : «Ի՞նչ պետք ե տանենք ևս փուչ աշխարհից, դարդակ յեկել ենք, դարդակ կերթանք»: Սաքի վոր շատ ել մաս դովլաթ ունեցա, աշխարքի տեր դառա հո ելի պըտի հողը մտնիմ, իմ ա մի բուս հողը, մեկ գաղ կտավը: Լավ ըլիմ լավ կասեն, վատ ըլիմ վատ»:

Գյուղացին հպարտ ե իր հողով իր ազնիվ աշխատանքով և հողից ու աշխատանքից ստացված արդար վաստակով: Գյուղացու սիրառ բաց ե, ինչպես իր տան դուռը, նրա ձեռքը շուայլ՝ ինչպես իր բարերեր հողը: Նա ատելությամբ ե լցված դեպի փողատեր քաղաքացին, վորը ժլատ ե, անհյուրընկալ աչքը չոած ուրիշի ունեցվածքին: Անա թե ինչու յե գյուղացին ասում: «Քաղաք վոր մտնում եմ հենց իմանաս թե աշխարքը սով ա ընկել. ել վոչ խեր կա, վոչ բարաքյաթ: Հացն ու ջուրն ել վոր փողով ընի ծախում ու առնում, ել մւմ դուռը գնաս՝ մւմ ձեռդ դեմ անես: Են մարդն ել՝ վոր քո տանը կերել խմել ամսով տարով քո աղ ու հացի վրա յե ելել աչքը աչքի առնելիս՝ հենց գիտեն՝ թե գյուլով խփեցին: Յետեվն ա քեզ դեմ անում, աչքը քամակը քցում»:

Կապիտալիզմի սպառնալիքը լուրջ վտանգ ե հանդիսանում նահապետական գյուղի համար: Գյուղացին նախազգում ե, վոր ժամանակները փոխվում են: Նոր հարաբերությունների սաղմերը քաղաքից գյուղ են ընկնում: Գյուղացին քաղաքից վերադառնում է փետրահան յեղած և նոր ու անծանոթ խոհերի մեջ ե ընկնում, աշխատում ե հասկանալ իր համար նոր այդ յերկույթները: «Ճողթ առնելիս՝ նո շատն ուզում ա մեկ յերկու շահի փող ենք դատել են ել ա խլի: Հեյ գիտի ժամանակ հա, մվ եր տեսկել, կամ լսել ավալի սվթա եսպես բաներ. ժառն ու գելը ի միասին արածում եյին, հիմիկ կովը վեր են քաշում, վոր անեսեն թե տակին յարաք ֆորթ կա, թե չե»: «Դու եւ թե ձեռիցդ գալիս ա, — պատասխանում ե սրան մի այլ գյուղացի, — զանակդ սրիր, մեկ կողմից ել վրա թոփը, աշխարքս թալան թալան ա»:

Կապիտալիզմի ազգեցությունն անբարոյացնող ե ու այլասերող: Մարդը գուրս ե գալիս մարդկային բնական կյանքի ձանապարհից: Զարչական կենցաղի ու հոգերանության դժերն սկսվում են պատվաստվել գյուղում:

Աբովյանն ամբողջ ուժով ծառանում ե թալանի աշխարքի— կապիտալիզմի դեմ: Հակաղրվելով քաղաքին և առևտրականին, Աբովյանը ծայրահեղության մեջ ե ընկել իդեալականացը ել ե գյուղը. գյուղացու տնտեսությունը նա ներկայացնում ե իբրև լիության և առատության ծով, վորտեղ միայն ոճի ձուն ե պակաս: Ամենից լավ իրեն, Աբովյանին եր հայտնի, վոր գրությունը գյուղում այդպես չեր: Հաքստիառլենին տված նրա տեղեկությունները Սարդարի հարկանանների մասին և ուրիշ շատ փաստեր ցրում են ամեն մի կասկած այդ առթիվ: Աբովյանն այդ անում ե գիտակցորեն: Նա չափաղանցնում ե գյուղացու բարեկեցության փաստը, գյուղի առավելությունը քաղաքի հանդեպ ավելի ցցուն գարձնելու մտադրությամբ:

Յեթի առեվտրականն ու վաշխառուն գյուղի համար գեռ գալիք աղետներ եյին հանդիսանում, հապա հոգեռականությունն իբրև հարստահարող տարր ի սկզբանե անտի կար և իր վնասակար գյությամբ խախտում եր գյուղականաշխատավորական համայնքի ներգաշնակությունը: Հենց այս առթիվ ե, վոր բարեկենդանի առնիուրախ սեղանի շուրջը խմբած գյուղացիք շատ սուր վոճ են գործածում հոգեռականության դեմ: Սրանց խոսքերի ու դատողությունների մեջ կայծկլուսում են առողջ միտքն ու քննազատությունը: Հասարակական կյանքի չարն ու բարին հասկացող այսմարդիկ խնդիրներին նայում իեն հասարակական ոգտակարության տեսակետից: Այսպես նայելով հարցին, նրանք նկատում են, վոր հոգեռականությունն իրեն չի արդարացնում: Հասարակական կյանքի որգանիզմում նա կույր աղիքի գեր և կատարում: «Նահախ տեղը դատած մալը ուտելը ու դարդակ քնելը հարած ա: Մարդ պետք ե ինքն ել աշխատի, վոր կերպած հալալ ըլիի»: Այս արդարացի զատավճառ ուղղված ե պորտաբույժ և ամենակեր կղերի դեմ: Ժամ ու պատարագի մեջ գյուղացին չի տեսնում հոգեգորականության դերի արդարացումը: Այլ խնդիր ե, յեթե նա կարողանար առաջ տանել գյուղի լուսավորության գործը: Բայց այդ անհնարին ե, վորովհետեւ «զրի մեն ու սպիտակը նո եսպես տեղը տերտերներն ել բռանց եյին ջոկում»: Հոգեռականությունն ինքը յեկս խարիստում եր աղիտության խփարում:

Անհեթեթություն կլիներ Աբովյանին հայտարարել նա-

հապետականության իդեոլոգ, ինչպես այդ արել են վոմանք լոկ այն պատճառով, զոր նա մերժում ե կապիտալիզմը: Նահապետական գյուղն իր դրական յերեւյթներով հանդերձ ամբողջական առումով չեր կարող բավարարել Արովյանի լուսավորական աշխարհահայացքի պահանջները: Զընդունելով կապիտալիզմը, մի շարք հիմնական հարցերում նա սահմանագծվել ե նաև նահապետական աշխարհից՝ առաջազրելով նոր, լուսավորյալ գյուղի գաղափարը: Նահապետական գյուղի հանդեպ ունեցած իր դրական վերաբերմունքի միջ Արովյանը մի շարք կարեոր վերապահումներ ե մտցնում: Աղասու բերանով, Աղասու ասող քննադատությունը, ուղղված կրօնական ծեսերի և հոգեորականության դեմ, նրա սկեստիցիզմը հավատի ինդրում և բնության պաշտամունքը խորը ձեղքեր են բացում նահապետական աշխարհահայացք: Արովյանի պատկերած գյուղացիք ևս արտահայտում են հեղինակի լուսավորական գաղափարները և բարձր են կանդնած նահապետական կյանքի սահմանափակությունից:

Ինչպես մուսույի, այնպես ել Արովյանի մոտ բնությունը հանգիստնում և կենգանի գոլոց, բնության առարկաների, յերեսությաների, ուժերի ուսումնախրությունը, նրանց ճիշտ հասկանալն Արովյանը համարում է կրթության նպատակը։ Այդ միտքը նա հանգամանորեն զարգացնում է նաև իր նշանավոր «Եախաշավիզ կրթության» գասագրքի առաջին մասի անտիպ նախարարություն։ Այստեղ ասված ե, «Վորքան վայելուշ և իմաստավից զարոց և բնությունը, վոր զջապատում և մեղ, մարդու գործառնությունը, վոր մենք ամեն լողի անսնում ենք մեղ մոտ, սովորական առարկաները, վորոնք գտնվում են մեր չորս կողմը. իմանալ անունները, ձեր, գործողությունը, վորպիսությունը, նպատակը, նյութը, բոլոր իրերի նկրգործությունը, ճանաչել և դատել ամեն բանի մասին, վոր լսում և տեսնում ենք՝ բնական մարդու համար, այլև ինչ ծայրագույն ուսում պետք ե ցանկալ։

Այս ճիշտ դրույթով և պայմանափորված եքսկուրսին մեթօդի լայն կիրառումը կարապետի կողմից. պարապմունքները գերազանցագես անցնում են բնության ծոցում, ուր յերեխաները զաստիարակի զեկավարությամբ հավաքում են և տեսակավորում ծաղիկներ և բույսեր, սովորում նրանց անունները, հետևում նրանց աճեցողությանը և այլն։

Կրթության հիմքում գնելով ոեալ գիտությունները, Արովյանը, ի տարբերություն մուսսոյի, չի սահմանափակվում բնական գիտություններով. նա գասափանգվող առարկաների ցանկում մտցնում է նաև պատմությունը, բացի այդ, կարապետի սաները լայնորեն ծանոթանում են հասարակական կյանքին։

Արովյանի կրթական սիստեմում բացակայում է կրօնական դաստիարակությունը, «Պատմություն Տիկրանի» վեպում նրա սաները չեն աղջութում։ Աշակերտների վոլց ուշագրությունն ուղղված է այն բանին, վորպեսզի կարողանան ճանաչել բնությունն ու հասարակությունը։ Բնական յերեսությների ճիշտ ըմբռնումը վերացնում է ամեն տեսակի սնութիապաշտությունը, վոչնչացնում է կույր հավատը։

Հասարակական շահերի ակտիվ գիտակցությամբ և ոժտում
Արովյանն իր սաներին: Նրանց անձնական յերջանկությունը
պետք է բղխի հասարակության յերջանկությունից: Անձնական
շահը միշտ ստորագտավում է ընդհանուրի շահից և զոհարեր-
վում նրան:

Այսպիսով Արովյանը պատրաստում է վոչ թե բուրժուա-
կան հասարակության գայլի որենքը սրբազործով հգոխաներ,
այլ հասարակության շահերին նվիրված ակտիվ քաղաքացիներ:
Նա կրթում է իր սաներին՝ յենելով հումանիզմի բարոյական
սկզբունքներից: Հարգանք գեղի մարդը՝ առանց ցեղի և հավատի
իտարության, առավելապես գեղի աշխատավոր մարդը,—ահա թե
ինչն է կազմում Արովյանի բարոյական ըմբռնութիւնը:

«Նոքար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի, թե զարիր, պակասու-
թյուն ունենա, քոռ ըլի, կամ քաշալ, կամ չորախ, ինչ ըլի, ըլի,
ասեց պարոն Տիգրանը, ով նրանց մեկ պակաս խոսք ասի, իմա-
շիր, վոր նրանում վոչմարդիւթյուն կա, վոչ հոգի, վոչ հավատ»:

Արովյանը հատուկ քննության առարկա յե գարձնում ճոր-
տության ինդիրը: «Տիգրան» վեպում մենք պատահում ենք ճոր-
տերի, վորոնք արյան վրեժով են լցված տերերի գեմ: Փախած
մի ռուս ճորտի Տիգրանը պատաստան և տալիս իր հարկի տակ
պահում, պաշտպանում է իշխանության հետապնդումից ու տնորի-
նում նրա հետագա կյանքը՝ իբրև աղատ աշխատավորի: Ուշագրավ
և Տիգրանի և Կարապետի խոսակցությունն այս առթիվ:

«Սաացեք ինձ՝ աչքի լույս՝ ինչ անեմ ես մարդի հետ: Դորդ
ա, զարիր ա, մեր բարեկամը չի, ճանաչ չի, ազգական չի, հայ
ել չի, ոտար ազգ ե:

—Հո մարդ, խանորդի ա, խոսք առավ պարոն Կարապետը:
—Ես ել եղ կուզեյի ասել պատասխանեց պարոն Տիգրա-
նը, են ել նեղության մեջ, վոչ թե մենակ մարդ: Եսպիսին չի՝
պետք է դուռը հետ անել: Նա մեր տունն ա ապավինել եկել,
ով ըլի, ինչ ազգ ել վոր ըլի, նրա դարդին պետք և հասնիմ,
եղ իմ պարտքն ե:

Սա մի հազվագեպ պայծառ ու անիստոն հումանիզմ ե:
Ֆիզիկական աշխատանքը Արովյանի կրթական սիստեմում
հատուկ նշանակություն և ստանում իբրև գաստիարակչական
կարևորագույն գործոն: Աշխատանքը բարերար ներդություն

և անում վոչ միայն մանկան ֆիզիկական ուժերի զարգաց-
ման վրա, այլ և մտավոր ընդունակությունների զրույթան ու
ընավորության կրթության: Մեփական աշխատամնքի արդյունքի
վայելում գերազույն յերջանկություն և պատճառում յերեխա-
ներին: Վարդանը և Յեղիսարեթը բանջարանոցում ունեն իրենց
մարդիրը և մշակում են սեփական աշխատամնքով: Արովյանի
մոտ աշխատանքը դառնում է պարտագիր բոլորի համար:

Ահա Կարապետի աշակերտների սովորած բանաստեղծու-
թյուններից մեկը.

«Վոր նստենք—ասենք, աղա յեմ, աղա,
Մեր հացն ով կտանի ջաղացն ու կազա:
Տանձը ինքն իրան բերանդ չի ընկնիլ,
Վոր տակին նստիս, տեղիցդ չես շարժիլ:
Ով զայրաթ չանի, կմնա սովոր,
Վերջ ժամանակին դռնե զուռ ընկած»:

Ծուլությունն ու անգործությունը մարդուն հասցնում են
դժբախտ վախճանի: Աշխատանքով և մարդու համար բացվում
յերջանկության և բարեկեցության ազբյուրները: Արովյանը յեր-
ջանկության նախապայմանը համարում է աշխատավորի հա-
մեստ և չափավոր կյանքը: Հարսաւությունը գժբախտացնում է
մարդուն, չափավոր կյանքով ապնիվ ու բարոյական
մարզը հարսաւանալով կորցնում է մարդկային կերպարանքը,
վեր և ածվում բարոյական հրեշի:

Աշխատանքը Փիզիկական գաստիարակության միջոցներից
մեկն ե, բայց վոչ միակը: Տիգրանը մեծ ուշադրություն և դար-
ձնում իր սաների ամրության, տոկունության և առողջության
վրա: Նրանք կարող են դիմանալ ցրտին ու շոգին, անցնել յեր-
կար ճանապարհ, գիտեն վարժ լրզալ և այլն: Այս ամենը վերա-
բերվում է յերկու սեռի յերեխաններին: Այս հարցում ևս Արով-
յանը զգալիորեն տարբերվում է Ռուսացից, վորը Սոփիի դաս-
տիարակությունը տանում եր տարբեր սկզբունքներով, քան Ե-
միլինը, ասելով՝ «Սոփին պետք է կին լինի, ինչպես Եմիլը պետք
և լինի տղամարդ»:

Իբրև մանկավարժ Արովյանն իր հայացքներով հիմնակա-
նում կանգնած լինելով Ռուսակետաների վրա, մի շարք
կետերում շեղվում ե նրանից և ուղղակի հակադրվում նրան:

Այսպես որինակ «ապատ գաստիարակության» հարցում, վոր Ռուս-
սովի սիստեմում հիմնական մոմենտ և հանդիսանում, Արովյանը
միանգամայն տարբերվում է նրանից: Խուսասոն «ապատ գաստիա-
րակության» իր սկզբունքով թերագնահատում և սիստեմատիկ
կրթությունը, ուսուցչի գեկավար գերը, դասագրքի անհրաժեշ-
տությունը և այլն, գերազնահատելով աշակերտների անձնական
փորձը, նրանց ինքնուրույնաբար աշխատելու—հետազոտելու
ուսակությունը: Արովյանի մոտ ուսուցիչն այն հմտում զեկա-
վարն է, վորի փորձված ձեռքբերումն ե գտնվում աշակերտներին
գեղի կյանք առաջնորդելու գելը, Ուսուցիչը մի կողմից զար-
գացնում և յերեխաների մեջ յեղած ընդունակություններն ու
դրական հակումները, մյուս կողմից արգելակում և բացասական
ազգեցությունները:

Կարապետը յերեխաների անթույլատրելի արարքների հա-
մար պատիժներ չի գործադրում և վոչ ել ձանձրացնում և նը-
րանց խրատական յերկար ու բարակ քարոզներով: Յերեխանե-
րի ուշադրությունը զարձնելով նրանց վատ արարքների բացա-
սական հետևանքների վրա, նա համառում է այն բանին, վոր այլ-
և այդ գեղքերը չեն կրկնվում: Մյուս կողմից լայնորեն գոր-
ծադրում են պլոտիւլակախվ սիջոցները: Ուսուցիչը բազմաթիվ
որինակներով և կյանքից առած կողմնակի պատմություններով
որինակների և յերեխայի ամեն մի հնարավոր սիրալը: Ընդհանրա-
պես վեպում յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր գաղափար
յերեխային համոզելու համար ուսուցիչը դիմում է կյանքից ա-
ռած կենդանի որինակների և վոչ իր խոսքի հեղինակությանը:
Յերեխաներին արգող պատմությունները սովորաբար հաղորդ-
վում ե չափազանց հետաքրքիր և կենդանի ձևով: Այդ պատմու-
թյունները նրանց ուշադրությունը կազմակերպելով վորոշ ուղ-
ղությամբ, բերում են համապատասխան յեղբակացության:

«Յերեխերը իսկույն իմացան, թե ինչ մտքով ա իրենց
պարոն Կարապետը ես ասում ու մտքերը գրին, վոր եսառց գե-
նը, չափավոր ուտեն, չափավոր նստեն ու վեր կենան»: Այսպի-
սով լավի և վատի, թույլատրելիի և անթույլատրելիի հասկացո-
ղությունը դաստիարակվողներին արվում է վոչ թե վերացական
դատողությունների ու անհամ, ձանձրակի քարոզների միջոցով,
այստեղ կյան «Վերք Հայաստանի»-ի բազմահարկ, շունչ
կարող նախադասությունները. շարագրանքը պարզ ե, նախադա-

* * *

Վերը պիտի լիներ Արովյանի տված գաստիարակության
վերջնական արդյունքը. Գիզիքական, մտավոր, հոգեկան և
բարոյական բնչ հատկություններով և ոժում Արովյանն իր
սիստեմով զաստիարակված մարդուն:

Ինչպես Խուսասոն իր եմիլից և նրա ապագա կնոջից՝ Սո-
ֆիից նոր հասարակության բջիջ և ստեղծում, այսպես ել Արով-
յանը Վարդանից և Յեղիսարեթից պատրաստում և որինակելի
քաղաքացիների տիպը, վորոնցից պիտի ստեղծվեր նոր հասա-
րակություն: Արովյանը պատրաստում և առողջ և տոկուն մարդ,
մարդ, վոր կանգնած և ժամանակակից կուլառուրայի բարձրու-
թյան վրա, լուսամիտ մարդ, ազատ բոլոր տեսակի նախադա-
շարումներից և կույր հավատից, վատահ իր ուժերին և կարո-
ղություններին, մարդ, վոր կյանքի իմաստը տեսնի գործունե-
յության մեջ, վորի համար աշխատանքը հանգիսանա յերջանկու-
թյան աղյուր, վորը գերազանի պարզ, համեստ, ազնիվ և բնա-
կան կյանքը և յերես գարձնի շահագործող վերնախավի ապա-
կանված միջավայրից ու կենցաղից: Արովյանի դաստիարակած
մարդը քաղաքացի յե, ոժաված քաղաքացիական արիությամբ:
Նա սիրում է կյանքը և մարդկանց, սիրում և մարկդային հա-
սարակությունը և նվիրված և նրա շահերին անդավաճան կեր-
պով:

«Պատմություն Տիգրանի» վեպը մի նոր և խոշոր ապա-
ցույց և Արովյանի գեմոլիրատիզմի:

Այս վեպը Արովյանի մանկավարժական-հասարակական
գաղափարների արտահայտությունն ե գեղարվեստական գրա-
կանության մեջ. Սա վեպ չի սովորական մտքով և ունի խոշոր
թերություն վիպական արվեստի ձևական պահանջների տեսա-
կետից: Զեռնարկելով այս գործը, վիպասանն այլ խնդիր և ու-
նեցել առաջադրանք: Վիպական ձեռ սոսկ միջոց և հանդի-
սացել հեղինակի ձեռքին իր մտքերն ընթերցողներին մատչելի
և գրավիչ գարձնելու համար: Յեղ իրոք, «Տիգրանը» մինչեւ վեր-
ջին եջը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Այս գրվածքում
լեզուն մտքերի և, զավել տաճկերենի և պարսկերենի խաւ-
նութից, այստեղ կյան «Վերք Հայաստանի»-ի բազմահարկ, շունչ
կարող նախադասությունները. շարագրանքը պարզ ե, նախադա-

սությունները սեղմ: Անկասկած «Տիգրանը» գրված է «Վերք Հայաստանի»-ից բավականի ուշ, հավանորեն Յերեվանում պաշտոնավարելու շրջանում, կյանքի վերջին տարիներին և թերեւ այդ է պատճառը, քոր գործն անավարտ և մնացել:

Տասնամյակների վրայով այդ մեծարժեք վեպը համբ լուսւթյամբ և անցել, ասես խոռված անցած սերունդների զայրացուացիչ անտարբերությունից: Տասնամյակների կյանքը չի զրկել այդ գրվածքն իր արժեքից: «Պատմությունն Տիգրանի» յերկն այդ յերկար ժամանակամիջոցն անցել է հսկայի քայլերով և մեզ և հասել միանգամայն թարմ ու կենսունակ: Այսոր վերջաշապիս Արովյան-մանկավարժը Կարապետի և Տիգրանի բերանով պիտի խոսի մեզ հետ՝ խորհրդային մանկավարժի, ծնողի, յերիշտասարդի և պատանու հետ: Այդ խոսքը սիրով կլսվի բոլորի կողմից և չի հնչի խորթ ու ոտար, միամիտ ու հնացած, պազ ու անտարբեր: Նա մեզ կհմայի իր խելացի ու խորիմաստ մտքերով, բազմափորձ մարդու ոգտակար խորհուրդներով, կրոցավառի իր անորինակ սիրով դեպի նոր սերունդը:

* * *

Մի հարյուրամյակ և բաժանում մեզ Խաչատուր Արովյանից, սակայն այդ հեռավորությունից նա նայում է մեզ պայծառ հայացքով, ինչպես արելով անամպ յերկնքից. հեռավոր ժամանակների մշուշը չի մթագնում նրա գեմքը, այլ ցնդում է նրա անաղարտ պայծառությունից: Իր՝ արեվի պես ջերմ ու լուսավոր սրառվ, գարնան պես բուռն ու տարերավի կյանքով, նա խորտակեց հայ ժողովրդի մտքի կապանքները, ջարդեց նրա կյանքի անշարժության ասուույցը: Արովյանը մեր նոր գրականության, մեր նոր կուլտուրայի գարունը հանդիսացավ և ունեցավ գարնան պես կարճատեկվ, բայց բուռն ու գեղեցիկ կյանք:

Այսոր Արովյանը խոսում է մեզ հետ իր հարյուրամյա հեռավորությունից, «Թաք ըլի զնւ, զնւ՝ իմ պատվական ազգ՝ քո վորդու արածը, քո վորդու խակ լեզուն սիրես, ընդունես, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, վոր աշխարհի հետ չի փոխիլ»:

Խորհրդային ժողովուրդը սիրով հայր և տմեն մի արժանավոր գավակի:

Արովյանը մեռավ ժողովրդի սիրուն, ժողովրդի սերն եւ նըան անմահ կպահի:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Աշխարհաբարի և գրաբարի պայքարը նույնքան հին է,
վորքան ժողովրդի սրայքարը հայ աշխարհիկ և հոգեփոր տերերի
դեմ: Դա գասակարգային կուլտուրաների բաղնումն եր, դեմո-
կրատական և կեղերա-ֆեռալական կուլտուրաների մշտական ու
անհաշտ կրկվը:

Աշխարհաբարի պայքարը գրաբարի դեմ անցյալ դարի 40-
ական թվականներից թեփակոխեց նոր շրջան, կրեց առավել բուռն
ու կատաղի բնույթ՝ խրախույս ու վողի ստանալով դարերի քնից
սթափված ժողովրդից, վորի ձայնն սկսում եր հնչել առնական,
բարձր ու լսելի:

Այդ պայքարը թողեց իր տարերային բնույթը՝ դառնալով
խորը գիտակցական, մտածված, պատճառաբանված ու կյանքի
փաստերով հիմնավորված:

Աբովյանը աշխարհաբարի պայքարը գրաբարի դեմ հենց
այդ մակարդակի վրա զրեց՝ մարտական լիցք ստանալով ժողո-
վըրդից:

Աբովյանը ժողովրդի կուլտուրական վերածնության գործում
լեզուն համարում է ամենակարելոր գործոնը: Ավելին, լեզուն ազ-
գի գոյության, նրա ինքնուրույնության առաջին նախապայ-
մանն ե ըստ Աբովյանի: «Ա՛ի՞ լեզուն, լեզուն, լեզուն վոր չըլի,
մարդ ընչի նման կըլի», բացականչում է նա «Վերք Հոյաստանի»
վեպում: Իր «Նախաշավիկ կրթության» դասագրքի անտիպ
առաջարանում Աբովյանը զրում է, «Բայց այդ բոլորի առաջ-
նորդը, կամ զեկավարը լեզուն է, առանց վորի մեսնում ե ամեն
բան մեզ համար ու չի կարող վորեն ներդորություն ունենալ»:

Անցողաբար նկատենք, վոր Նալբանդյանը նույն մերձե-
ցումն է ունեցել այս խնդրին, ինչ վոր Աբովյանը, նա յելս լեզուն
համարել է ազգի գոյության պայմանը, հիմքը: «Աղդ կոչվածը, —
զրում և Նալբանդյանը, — վոչ այլ ինչ է, յեթե վոչ լեզու, առանց
վորի չի կարող լինել ազգ: Լեզուն ազգի վագին է»: Մի այլ տեղ

Նալբանդյանը գրում է, «Ազգը ինքն ըստ ինքյան ապդ չե, յիթե չունի լեզու»:

Մի ուրիշ աշխատության մեջ Նալբանդյանը ի հաստատություն իր մաքերի, մեջ և բնում «Վերք Հայաստանի» վեպից լեզվի մասին ասված Աբովյանի հայտնի խոսքերը, «ԱՌ՝ լեզուն, լեզուն, լեզուն վոր չըլի, մարդ ընչի նման կըլի,—ասում է նահատակ Աբովյանը»:

Ի՞նչ ընթացք և ուղղություն պիտի ունենար մեր լեզվի զարդացումը, ի՞նչ լեզվով պիտի զարդանար մեր զբականությունն ու կուլտուրան։ Համենայն դեպս վոչ գրաբար լեզվով, վորը հենց ևն գլխից խորթ եր և ոտար ժողովրդին, «Անկարելի ա, թե մեր յերանելի թարգմանչաց ժամանակին՝ հայք են լեզուն ելին ըլում խոսելիս, վոր նրանք գրեցին»,—ասում ե Աբովյանը մի ակնարկ նետելով մեր լեզվի պատմության վրա։ Նրա կարծիքով զբարարը զուրկ ե իրական արժեքից, նրա արժեքը սոսկ պատմական ե։ «Մեր գրաբառ լեզուն անդին ե, — գրում ե Աբովյանը, — նմանը չունի, ինչքան լեզու յել վոր գիտեմ, մեկն ել են համը, ևն քացրությունը, ևն ճոխությունը չունի. բայց մեր վաստից՝ հազարից մեկը չի հասկանում, ինչ պետք ե արած»։

Աբովյանը գրաբարը համարում ե մի պատվար, մի խոչընողութ, վոր արգելակում ե մեր կուլտուրայի տուաշընթացն ու փառակում ժողովրդի հանապարհը գեպի կուլտուրան։ «Թեկուզ սոերեն, նմեցերեն, յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ՝ տառը ըլլի վոր հասկանալին, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ իմ պրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց։ Ախր վոր ազգը են լեզվովը չի խոսում, են լեզուն չի հասկանում, սաքի հենց բերնիցը ել վոսկի վեր ածիք. մեմ պետք ե տաս։ Ամեն մարդ իր սրտի խարջ բանը կուզի»։

Նալբանդյանը, կարծեք շարանակելով և առավել ևս սրելով Աբովյանի միտքը, գրում է. «Ի՞նչ վոր են հայոց իմաստունների համար չինացիների նեղինակները, ճիշտ նույնն են մեր ժողովրդի համար իրենք՝ հայկական չինացիները»։

Եզրակացությունն ավելի քանի պարզ ե, գրաբարը ազգի լեզուն չեր, ևա մի քանի տասնյակ իմաստակների մենաշնորհ իրավունքն եր, այն ուեակցիոն ժամանականության, վորը գրաբարը գործադրում, իր ժողովրդի դիմ իրեկ ինքնապաշտպանու-

թյան զենք՝ փակելով նրա առաջ լուսավորության գոները։ Խըրաթին, անմատչելի և նույնիսկ բոլորովին անհատկանալի շարադրելով այդ իմաստակների կողմից դիտվում եր իրեկ գրական հատկանիւց մեծ տականդի նշան, և ծաղրվում եր պարզ, ժողովրդին ժամանչելի շարադրանքը, իսկ հեղինակը հայտարարվում անշնորք։ Այդ եր, վոր մի պահ Աբովյանին խոր տարակուսանքի ու ծանր յերկմանքի մեջ ձգեց, այն պահին, յերբ նա պիտի ստեղծեր իր անմահ «Վերք Հայաստանի»-ն, «Հրամայել չեյի կարող, խնդըրեցի, աղաչեցի ել՝ լեզու մարդ չեր իմանալ չունքի յես ել եյի ուզում՝ վոր ինձ վրա չծիծաղին, չասեն կոպիտ ա, հիմար ա, վոր քերականություն, ճարտասանություն, արամաբանություն չգիւտի, յես ել եյի ուզում, վոր ատեն։ «Ո՞Շ ենպիս խորը, իրթին շարուզրել գիտի, վոր սատանեն ել միջիցը մեկ բառ չի կարող իմանալ հասկանալ»։ Այս տողերի տակ թագնված ե կծու հեղնանք, ուղղված այն ժամանակ թագավորող միջնադարյան սիոնատիկայի և այդ գաղափարախսության կրողների դիմ։

Այս գրությունը հետագայում ավելի ներքո քննադատության և յինթարկվել Նալբանդյանի կողմից։ Մեծ հրապարակախոսն իր մի հոդվածում գրում է, «Այսքան պարզ և լուսապայցառ ճշմարտությունը չեն կարողանում այդ պարունակը գեռ խստակ աչքով տեսանել ուստի և ասում են, վոր պիտո յե մարդ այնպիսի լեզվով խոսի, վոր գիւտացի մարդը նրան չհասկանա, և վորչափ իրթին և մութը կը խոսեր, այնչափ արժանավոր և քանքարավոր եր հեղինակը, սոքաբնության կանոնին չհավանելով, վոր գրել եմարդում մեջ լեզու և բանականություն՝ սրտի զգացմունքը ընկերին հայտնելու մասին, յուրանցից կանոն են հաստատել թե պիտո յեր խոսել այնպես, վոր գժվար լիներ հասկանալը, ուրեմն յիթե գժվար հասկանալի խոսելը գովելի մի բան եր, բնավ ջխոսելը վորչափ և . . .»։

Սուավել վողբալի վիճակում եր գտնվում գալրոցը։ Իր «Նախաշավիդ կրթության» գործի առաջաբանում Աբովյանը մի սուր պովեմեկա յե մզում այն հնամու քննադատների զեմ, վորոնք հետագայում ծանոթանալով աշխարհաբար այդ գասագրքին, պիտի հեղինակի հասցեյին ասելին հեղնանքով, «Բանը կտրվել ա, նստել ա գարտակ-գարտակ գիւտիցը գուրս տվել ես մասակը մեր պառավներն ել գիտեն»։ Այդ քննադատներին Աբովյանը

հեգնանքով անվանում ե վերացական փիլիսոփաներ, վորոնց
միտքը չի հանգչում բնականի և իրականի վրա, այլ ողապարում
ե յերկնքում: Նրանք փորձով չճանաչելով յերեխաների հոգեկան
կարողությունները, ծանրաբեռնում են նրանց միտքը հոգետրա-
կան քերթվածներով վորոնց թե լեզուն և թե իմաստը միտա-
գամայն անհասկանալի յե ու խորթ նրանց, և կյանքի գործնա-
կան պահանջների տեսակիտից միանդամայն անպետք: Ել ին-
չիվ ե հնարավոր բացել յերեխայի միտքը, հասկացնել առար-
կայի իմաստը, սիրել տալ դպրոցն ու գիտությունը, հարց ե
տալիս Աբովյանը: Յերեխաների աչքին տառերը փուշ են դառ-
նում, նրանք դպրոցից խուսափում են ինչպես տանջարանից:
«Ում չե հայտնի՝ թե վնրքան ե ուսարացել մեր զրաբառ լեզուն
հասարակ գործածականից և քանի տարի յե հարկավոր նրա կանոն-
ները լիակատար ճանաչելու համար: Մինչեւ յերբ պետք ե տան-
ջըվեն վողորմելի մանուկները: Դպրոցը նրանց թվում ե տան-
ջարան, ուսումն տանջանք և սոսկալի պատիժ և այս ամենի
պատճառը լեզվի իրթնությունն է»:

Աբովյանին քաջ ծանոթ եր այն ժամանակվա խալիֆայա-
կան դպրոցների վողորմելի վիճակը. յերեխաները տարիներ
շարունակ աչքի լույս ելին փչացնում ժամադրքի, կտակարանի,
սստվածաշնչի մեռած տառերի վրա, զրի սեղն ու սպիտակը
ջոկելու, հասարակ գրաճանաչություն ձեռք բերելու համար մի-
այն: Աբովյանն իր կաշվի վրա յե զգացել այդպիսի ուսման ամ-
բողջ սարսափը: Ճիշտ նույն կերպ ե տրամարանում նաև նալ-
րանդյանը: Նա յեկու Աբովյանի պես յենելով կյանքի սեալ պա-
հանջներից, ամելի գործնական ե համարնարարով հար-
կավոր գիտություններ սովորելը, քան ժամանակ վատնել մե-
ռած զրաբարի վրա, վորը հայ մանուկին հաց ու ջուր չեր տալու:
«Թող հայոց մանուկը սովորի յուր մայրենի լեզվով աղատա-
կան գիտությունները, թող նա այն աշխատությունը ինչ վոր
գործ ե գնում հին և մեռած լեզուն սովորելու համար, գործ ածե
հարկավոր գաղափարներ ստանալու մասին, չե պիտո նորա հինգ
գարու հայախոսությունը, այդ նորան հաց ու ջուր չի տա, նո-
րան հարկավոր ե գիտություն, վորը կարող ե ստանալ նոր լեզ-
վի միջնորդությունով»:

Աբովյանն իրեկ մանկավարժ խոր վողբերգություն ե

ապրել, նկատելով յերեխաների գժկամությունը դեպի հայ գիրն
ու գրականությունը և բուռն հետաքրքրությունը գեպի այլ ազգի
հաղինակների ստեղծագործությունները: Սիրտս ուղում եր պատոր,
վոր ես երեխանց ձեռքն ել ինչ Հայի գիրք տալիս եյի, չեյին
հասկանում: Ռուսի, նեմեցի, Ֆրանցուզի լեզվումը ինչ բան վոր
կարգում եյին, նրանց անմեղ հոգուն ել եյին ենպես բաները գիր
գալիս: Ուղում եյի շատ անգամ մազերս պոկեմ՝ վոր ես ոտար
լեզուքը ավելի եյին սիրում, քանց մերը»:

Յեվ այսպիս, ինպիրը լուրջ եց, գրությունը կրիտիկական: Պետք եր յելք գտնել, յելքը գտնվեց: Աբովյանի ձեռքով գիրեզ-
ման զրվեց վաղուց մեռած, բայց իր գոյությունը մի կերպ
քարշ ավոր գրաբարը: Հին, մեռած լեզվի գիրեզմանափորը մի-
աժամանակ գառավ նոր լեզվի տատմայը: Վունատակ տալով
գարերի արագիցիան, Աբովյանը ժողովրդի կենդանի լեզուն, վոր
արհամարհած եր ու մերժված, գերադասից վսեմ զրաբարից: Այսպես ծնունդ առավ Աբովյանի «Վերը Հայաստանի»: Առաջին
անգամ զարերի լուրթյան կնիքը վերցվեց ժողովրդի շուրթերից:

Հիշենք Աբովյանի հայտնի խոստովանությունն այն մա-
սին, թե ինչպես զրաբարը կապել, կաշկանդել եր նրա միտքը,
և թե ինչպես աշխարհաբարը փշրեց այդ կապանքները, թեվ ու
թոփչք տվեց նրա մտքին, յերեվակայությանը և ստեղծագոր-
ծությանը: «Վերը» տառաջարանում կարգում ենք. «Ինչ
խուը կորած, մոլորած մտքեր ունեյի, ըոլորը բացվել յեղ եյին
յեկել: Նոր եյի իմանում, վոր գրաբառ ու ուրիշ լեզվներ մին-
չիվ են սհաթը միտքս փակել, բխովել եյին»:

Աբովյանն ինչպես բոլոր հարցերում, նմանապիս և այս
խնդրում մի յելակետ և ունեցել, մի շահ և հետապնդել՝ դա-
րուն ժողովուրդն եր ու նրա շահը: Աբովյանը գրում եր ժո-
ղովրդին հասկանալի լինելու համար և այդ անում եր նույնիսկ
այն ժամանակվա «գիտունների» աչքին տգետ յերեվալու
ոիսկով:

«Թող ինձ այսունետեվ տգետ կանչին. լեզուս բաց ա ելե՝
իմ ընտիր, աղիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թող՝ տրամարանու-
թյուն գիտեցողը իրան համքյարի համար զրի, յես քո կորած,
շվարած վորդին՝ քեզ համար»: Աբովյանը մտահոգված եր, վոր
իր գործը «մեր խալիս սրտով ըլի»: Թիտուն մարդիկ շատ

գրքիր հն կարգում, ժողովուրդն ի, վոր զուրկ և ընթերցանոււ
թյունից, հասարակ մարդն ի, վոր կարգալու զիրք չունիւ «Ֆեռ-
դուա կամ վարդիկական սեր» զբամատիկական յերկի առաջարա-
նում զրում ե, «Հույս ունիմ, վոր ամեն մարդ ենդուր համար
ավելի հավեսով կարգա, չունքի մեկ դժար բառ չկա միջումը՝
բոլորն աշխարհաբառ ա: Մախսուս ես լեզվովը զրեցի, վոր գեղը-
ցիքն ել համականան, քաղաքացիք եւ Միթե գեղցին մարդ չի,
չի ուզիլ վոր մեկ նոր բան ել նա լիի կամ կարգա ելի խոսովը
թողիսուի», Վճռականապես ուհամանագծիկելով իշխող դասակարգից
և նրա մտավորականությունից, արհամարհելով նրանց կարծիքը,
Արովյան իր կյանքը, իր բախտը, իր ստեղծագործությունը
կապում է ժողովրդի հետ, դառնում նրա արտահայտիչը: «Թե
պիտուն, խելոք մարդիք, ինձ պահարակեն, զու ել ա ինձ պա-
հիք՝ սիրելի ազգ, չունքի իմ ուղածս հն ա, վոր քեզ ծառայիմ,
քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա»:

* *

Վորքան և տարորինակ ե այս, բայց փաստ ի, վոր մեր
լեզվաբանները զեռն Արովյանի լեզվական հայացքները հա-
տուկ քննության առարկա չեն զարձրել բառ յերեսութիւն
առանձին կարելորություն չտալով այս խնդրին: Ավելին, յերբ
նրանք փորձ են արել ցույց տալ զբական հայերենի մշակման
պատմությունը, Արովյանի անունը մի կողմն են թողեւ, պնդե-
լով, թե նա չի բարձրացել բուն ժողովրդի լեզվից—բարբառից,
զբական լեզու ստեղծելու փորձ չի արեւ, զբական հայերենի մը-
շակման գործում գեր չի խաղացել:

Մեր լեզվաբաններն այս ղերը վերագրում են միմիայն
«Հյուսիսափայլ»-ին, անտեսելով Արովյանի կատարած հսկայական
աշխատանքը, և այդ վոչ թե ձեռքի տակ անհրաժեշտ փաստեր
չունենալու պատճառով, այլ շնորհիվ այն բանի, վոր նրանք
հարցին մոտեցել են կանխակալ կարծիքներով և նրապարակում
յեղած նյութերը անհրաժեշտ լրջությամբ և ուշադրությամբ չեն
ուսումնասիրել: Ցերե մեր լեզվաբանները բարեխիզմ կերպով ու-
սումնասիրելին միմիայն «Վերք Հայաստանի», այդ ել բավական
կիներ համոզվելու համար՝ թե վորքան մտածված ու ծրագրված

ի յեղել Արովյանի մղած պայքարը գրաբարի դեմ և թե նա
վորքան լուրջ ե վերաբերվել նայ լեզվի ապագայի հարցին:
Խնդիրը նրանում չի, վոր Արովյանով աշխարհաբարի և
գրաբարի պայքարը չավարտվեց ու վերջնականապես չապահով-
վեց աշխարհաբարի հաղթանակը, այլ նրանում, վոր Արովյանը
զրեց մեր լեզվաշնության հիմնական հարցերը և իր ժամանա-
կին լուծեց միանգամայն ճիշտ կերպով, յելնելով մեր ժողովրդի
պահանջներից ու շահերից: Արովյանի յերախտիքը այս հարցում
համարվել ե այն, վոր նա առաջինը զրեց ժողովրդի լեզվով:
Այն ինչ, հեղինակի թե որդեն հայտնի և թե նոր ձեռք բեր-
ված նյութերը մեզ հիմք են տալիս միանգամայն նոր յեղբա-
կացություն անհեռա: Սկսելով ծողովրդական լեզվի գարձանությու-
նից, Արովյանն իր ստեղծագործություններում համառեն մշա-
կել ու փոփոխել ե այն և վերջին շրջանի իր յերկերում ստեղծել
ե այնպիսի գրական լեզու, վորին կարողացավ հասնել միայն
70-ական բավականների գրական հայերենը:

Հիբավի, Արովյանի «Վերք Հայաստանի»-ն գրված ե բուն
ժողովրդի լեզվով՝ Քանաքեռի բարբառով: Արովյանն անգամ չի
խուսափել տաճկերենի և պարսկերենի ահազին ազգեցությու-
նից, սակայն նույն այդ գրվածքում արտահայտելով իր անբա-
վականությունը «Վերք»-ի լեզվից, նա ավել և մեր լեզվի հե-
տագա զարգացման մի ամբողջական ծրագիր, վորի առաջին
դորձնական կիրառողը նենց ինքն և հանդիսացել:

«Վերք Հայաստանի»-ի առաջնորդում Արովյանն իր վեհի
լեզուն համարում ե խակ լեզու, մանկական թոթովանք և կոչ
և անում ազգին սիրել այն «ինչպես հերը իր մանուկի կմկմա-
լը, վոր աշխարքի հետ չի փոխիլ»: Սակայն, ինչպես թոթովախոս
մանուկն ապագայում զառնում ե պերճախոս յերիտասարդ, ճիշտ
այգան ել ժողովրդի նոր ստեղծվող կուլտուրան, զրա հետ մեկտեղ
և լեզուն, իր սկզբնական աստիճանից, պարզ ու պրիմիտիվ վիճա-
կից պիտի ամեր, բարձրանալ՝ դառնալով խորը և բովանդա-
կալից: «Յերբ վոր կմեծանամ, խրթին լեզվով ել կխոսանք», —
ասում ե Արովյանը: Այսպիսով, ժողովրդի կուլտուրական մտ-
կարգակը աստիճանաբար պիտի բարձրանար, հեղինակը նրա-
նից չպիտի կտրվեր, այլ իր հետ նրան ևս պիտի վեր բարձր-
բացներ, հասցնելով կանոնավոր մշակված գրական լեզուն հաս-

կանալու, ոյզ լեզվով արտահայտվելու մակարդակին: Լեզվի գարշ պացումը պետք է զուգահեռ ընթանաբ ժողովրդի զարդացմանը, նրա կուլտուրական աճին: Արովյանը պարզ ըմբռնում եր, վոր- սմեկ ազգ ընչանք յերկար ժամանակ կրթվի վհչ, ուսման չհե- տեղի, անկարելի ա, թե նրա միտքը ենակես բացվի, ու նրա գյորա բառեր հնարի»:

Իտալական հանձարել բանաստեղծներ՝ Դանտեյի և Պետ- րարաչի՝ մայրենի գրականության համար կատարած պատմա- կան գերն ե Արովյանն աչքի առաջ ունիցել հայ գրական լեզ- վի հարցը քննելիս, նրա ապագան ուրվագծելիս: «Յերանի են սհաթին, — զրում ե Արովյանը, — վոր մեկ ազնիվ հայի ծնունդ՝ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անողիտան զրությունը դեն քցի ու ինքը նորեն ենպես զրի մեր քաջ հայերի պատմությու- նը, վոր լող, կարգացողը վասվի, բորբոքվի, զարմանա, հիանա ու են զրողի դալամի ու գիրքը ինչպես Պետրարքինը՝ մասուն- քի տեղ պաշտի, ծոցումը սլոհի»: Վերոհիշյալ տողերից յերե- վում ե, վոր Արովյանի համար «Վերք»-ի լեզուն նպատակ չի յեղեւ այլ ժամանակավոր միջոց իր նպատակների համար, իսկ նպատակը՝ կուլտուրայի և լուսավորության պրոպագանդն եր ժողովրդին հասկանալի լեզվով: Նա գիտակցում եր, վոր հայ լեզվի կատարելության համար յերկար ճանապարհ պետք եր անցնել լեզվի կուլտուրան պիտի բարձրանար ժողովրդի կուլ- տուրական աստիճանի հետ մեկտեղ: «Պարապ վախտի խաղա- լիք»-ի առաջարանում խոսելով իր առակների և զրանք զրելու շարժաբիթի մասին, ավելացնում ե, «Հույս/ունիմ, վոր ուրիշ մարդիկ դհա լավը շնո՞ն»: Սա ևս նույն անբավականությունն ե, ինչ վոր «Վերք»-ի նկատմամբ արտահայտածը:

Մեր լեզվի այն ժամանակվա վիճակը լուրջ մտահոգու- թյուն ե պատճառել Արովյանին: Ատարամուտ բառերն զգալի տոկոս կազմելով, լուրջ վտանգ եյին սպասնում նրա զոյու- թյանը, կուչում եր լեզվի խոկական պատկերը, լեզուն աղա- վաղվում եր: Լեզվի այսպիսի վիճակն Արովյանը ճիշտ կերպով բացատրում ե մեր ժողովրդի քաղաքական զրությամբ: «Ժամա- նակն ենպես ծովել եր մինչեւ հիմա, վոր մարդ իր վլուխը չեր

կարում պահիլ, մեր մնա լեզվի դարպը քաշիլ: Ես ա պատճառը՝ վոր մեր նոր լեզվի կեսը թուրքի ու Պարսից բառ ա»: Քիչ ներքեւ Արովյանը զրում ե, «Ենքան ա նրանց լեզվի համը ընկել մեր ուզգի բերանը՝ վոր խաղ, նեքյաթ, առակ թուրքերեն են ասում, իրանց լեզուն թողում, պատճանառ չունքի սովորություն ա ըն- կել»: Յեկ այդ սովորությունը վերացնելու նպատակով Արով- յանը մայրենի լեզվով բայաթիք ե հորինում ժողովրդի համար:

«Պարապ վախտի խաղալիք» առակների գրքի վերջում ա- վելացնելով «Բայաթիք» բաժինը, առաջաբանում Արովյանը հե- տեւյալ կերպ ե մեկնում իր գիտավորությունը: «Բայաթիքը են մտքով եմ զրել վոր չունքի մեջլում, հացի վրա թուրքեկար են ենպես բաներ ասում. լավ հայը հայելվար ասի, վոր քիչ քիչ լեզուն քաղցրանա, չունքի վոչինչ բան լեզուն ենքան չի քաղցրացնիր վորքան խաղ ու տաղը»:

Արովյանին լուրջ անհանգստություն ե պատճառում ևս մի խնդիր, որ տիրող շրջաններում բուն զրած այն վասակար սովորությունն եր, յերբ խոսելիս հայերենին անտեղի կերպով խառնում եյին ոռւսերեն բառեր, և այն ել այնպիսի մեծ չափով, վորից անձունի կերպով աղավաղվում եր թե հայերենը և թե ոռւսերենը:

Այս անհանգուրծելի դրությունը Արովյանը սուր կերպով ծաղրում ե իր «Վերք Հայաստանի» վեպում:

«Այր վոր ասում ես՝ փրառուիվարսա արի, սբուշնա յեմ, ոփիժարսա ելա, փողշենի ավիի, սանյարի շատ ունիմ, զլուխս քրուժիտցա ելավ, փեզքստնի մարդ ա, ուսպոյնիկ ա, յափերնիկ ովմին ես, գնանք քուփարսա ըլինք, սոփրանիյեմեն եմ գալիս, փողիզքատսա արին, ճամփին փսերքի ուրսպին յա, շատ խլա- փոք սլուշիտցա չի ըլում և այն: Աչքի լիս՝ մի մտածիր թե լոողն ի՞նչ կասի: Խոկ գիտուն լուսավորյալ մարդն նա յե, վոր ամեն լեզուն քանի կարա, խստակ խոսա, Դու քո լեզուն՝ վոր խստակ խոսա, ինչ ֆաս ունի, հենց զիտում ես, խելքդ ձեռիցդ կառ- նեն, թե սովորած իմաստությունդ չուրը կթափի, կամ թե չե աերության սիրտն ես ուզում շահիլ: Բարեկանամ տերությունը յերբ կուզի վոր մարդ իրան լեզուն կտրի, իր ազգիցը հեռանա: Բաս ել մեր են եսքան վարժատուն շինում, վարժապետ պա- հում, աստիճան, պատիվ տալիս: Ֆրանցուզ, նեմեց, ինգլիզ,

Վար քո լեզուն սիրում, զովում են, քանի՞ պատիվ դու յել պետք ե սիրես ու զովես»: Քիչ ներքել ավելացնում ե. «Եսքան խառը լեզվի հետ, դու յել վոր քո պբովիլիվաթսան, մրտովիլիվաթսան ես խառնում, ախար գրանից Բնչ համ դուրս կղա»:

Անձտություն կլիներ կարծել, թէ Արովյանի վերը բերված տողերը վորեկի չափով վարկաբեկում են ոռւսաց լեզուն կամ թե նա դեմ եր ոռւսերենի տարածիանը հայերի մեջ: Արովյանն եր և մինչեւ վերջը մնաց ոռւսական կուլտուրայի և հատկապես ոռւսաց լեզվի ջերմ կողմնակից: Այդ եւ վկայում նրա արխիվում պահպանված «Նոր տեսական և գործնական քերականություն ոռւսաց վասն հայոց» տավարածավալ աշխատությունը: Այդ գըրքի առաջաբանում ալարգաբանելով իր նպատակը, Արովյանն ի միջի այլոց գրում ե. «Եյս մտքով՝ վոր լեզուն, լինի գա արեվիկան կամ արեվմայան, կարող ե այնպես նպաստավոր լինել մեր ազգին, քան ոռւսացը, վորի միայն հարկավորությունը և չքնաղությունը մեր ժամանակներում մինչեւ իսկ լուսավորյալ ազգերին ստիպում և ձգտել, ունենալ այն, ճոխանալ նրա մեջ, այլ և նամանավանդ նրա ընձենած բազմատեսակ ոգուածը, վոր մեր ազգը ինքն ել տեսնում և ոգուած ե քաղում, ինչպես արքունի ծառայության պաշտոնների մեջ նույնպես և քաղաքական կենցաղավարության մեջ» (Թարգմանված զրաբարից): Նույն աշխատության «Հայոկություն ոռւսաց լեզվի» բաժնում ասված ե. «Լեզուն ոռւսաց և մինն հընդարձակույն և ամենահարկալոր լեզվաց ի վերա յերկրի»: Իր «Պատմություն Տիգրանի» վեպում Արովյանը ոռւսաց լեզուն պարտազիր և գարձնում հայ մանուկների համար: Մայրենի լեզվից հետո ոռւսերենն առաջին անհրաժեշտությունն ե համարում իրերեվ մեծ կուլտուրա ունեցող մեծ ժողովրդի լեզու: «Մուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք ե ամենից առավել համարենք», — ասում ե նա «Ակերք Հայաստանի»-ում.

Արովյանի խոսքը վերաբերվում ե լեզվի աղճատմանը և հայ «գիտունների» արհամարհանքին զետի մայրենի կուլտուրան ընդհանրապես և լեզուն մասնավորապես: Դա միծապետական շովինիզմի արտահայտության մի ձեզն եր, վորի զեմ անհաշտ պայքարում եր Արովյանը:

Այսոր, ձեզով ազգային և բովանդակությամբ սոցիալիս-

տական կուլտուրաների ստեղծման այս մեծ գարաշը անում, այդ խնդիրն առավել քան ակտուալ ե դառնուժ, ավելի քան սրբում և կուլտուրական բարձրորակ լեզվի հարցը, հարց, վոր այնքան հուզել ե Արովյանին: Նալբանդյանն ել Սրովյանի պիս խիստ մասհոգված եր մեր լեզվի հստակության խնդրով: Քննության յենթարկելով նոր Նախիչևնի բարբառը, Նալբանդյանը նույն տիտուր վիտան և արձանազրում, «Վողբալի» և արտավելի բան, այն յերիտասարդ մտրդիկը, վոր հարակցություն ունեն ոռւսների հետ, ամենայն կերպ աշխատում են յուրյանց հայերեն խոսակցության մեջ վորքան կարելի յե շատ գործածել ոռւսի բառեր, նորա մտածում են թե վորքան այլանդակնեն յաւրյանց լեզուն ոռարի բառերով, այնքան խելացի և բան հասկացով են համարվում: Նալբանդյանը ևս Արովյանի պիս խարազանում և այն թյուր և միամիտ կարծիքը, թե ուստի բառերի անտեղի գործածությունը զիտուն և կուլտուրական լինելու նշան եւ

Լեզուների ազակազման պատկերն Արովյանը տալիս և հետեւյալ սրամիտ որինակով. «Խտոնիր քո սիրական խաչի հետ ձուկը շաքար, կանֆետ (շաքարեղին), չամիչ չիր, խիզիլալա, տես ինչ համ կունենա»:

Մեր լեզվի այլպիսի վիճակը Արովյանն այնուամենայնիվ անհուսալի չի համարում. «Բայց սրա զեզն ել հեշտ ա, — գրում ե նա «Վերք Հայաստանի» վեպում, — քիչ քիչ կարելի ու խոտակեր յերբ վոր ազգը ուսումն առնի ու իր լեզվի բառերը քիչ քիչ հասկանա»:

Յեկ այսպես, լեզվի մշակման ուղղությամբ առաջին քայլը պիտի հանդիսանար հայերենն աղավազումից փրկելը, քանի վոր լեզվի մաքրությունը լեզվական կուլտուրայի առաջին նախապայմանն ե: Դրա համար ամենից առաջ պետք ե սիրել մայրենի լեզուն, ջանք անել կատարելապես տիրապետելու այն, չարահամարեն այն՝ ուրիշ լեզուներ խմանալու զիտքում: «Ենակեա մարդկան կա, — գրում ե Արովյանը «Վերքում», — տառը տառնը ինքն լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ առենից լավ աշխ, իրա ազգի հետ խոսելիս առնթ ա համարում, կամ ուրիշ լեզվով իր միարեա կամ, կամ ուրիշ բառ հետը խառնի»: Այս զրական սրինակով Արովյանը կամենում ե զատիկարակել հայ յերիտասարդությանը:

Հայ լեզվի, գրականության և կուլտուրայի զարգացման

հույսն Արովյանը կապում է յերիտասարդ սերնդի հետ Հին ինտելիգենցիայից հուսախար յեղած, նու սիրո և խրախուսանքի ջերմ խոսքեր և ուղղում հայոց նորահաս յերիտասարդներին - և իր բաղձանքը նրանց հայտնում, վոր մեր ժողովրդի բաղձանքն եր: «Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս յերիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արեվին զուրբան, տասը լեզու սովորեցիք, ձեր լիգուն զայիմ բռնեցեք, թիաս չեք ուզիւ վոր գուք ել զրքեր զրեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր զրքերն ել ոտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մաս անմահ: Ինչ կուզե Ֆրանցուզերեն, Նեմեցերեն գիտենանք, մենք չենք կարող ենապես բան զրիւ, վոր նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրան ուրիշա, մերն ուրիշ, մեկ ել վոր նրանց միջումն ենքան զրող կան, վոր վաչ թիվ կա, վաչ հետար... թաս ձեր սիրութ չի ուզիւ վոր գուք ել վոտանավոր զրեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, վոր այլազգք իմանան, թե մեր միջումն ել այն յեղել յերեվելի զրող ու մեր լեզուն դհա ափելի սիրեն»:

Արովյանը «Վերք Հայաստանի» վեպում մեր ժողովրդի կուլտուրական վերածնության մի ամբողջ շարժում և ծրագրում, ազգային լեզվի և զրականության հետագա զարգացման ուղիւներն են շում:

* *

Ինչպես վերն ասացինք, «Վերք Հայաստանի»-ից սկսած մինչև իր վերջին գործերն Արովյանը վորոշ ծրագրով, հետևողականությամբ, անընդհատ փոփոխել և մշակել լեզուն՝ զուտ բարբառայինից հասցնելով մշակված զրական հայերենի: Այժմ աեսնենք, թե ի՞նչ հետևողականությամբ և ընթացել լեզվի մըշակման այդ պրոցեսը, ի՞նչ ետապներ և անցել լեզվաշինական իր սկզբունքների կոնկրետ կիրառումը սեփական ստեղծագործությունների մեջ: «Վերք Հայաստանի» վեպում, վորն աշխարհիկ զրականության մանիֆեստը հանդիսացավ, Արովյանն անսփոփի գործ և ածում թանաքեռի բարբառն այնպիս, ինչպես վոր խոսում էր այն ժամանակվա քանաքեռցին: Սա մի գիտականացքար իր զեխառ իշխաղ զրաբարի դեմ, մի զորեղ ապացույց ժողովրդի մինչ այդ արհամարհված լեզվի ուժի և գեղեցկության: Արովյանի «Վերքում» իր արտահայտությունն ե գտել

ժողովրդի լեզվի թե ուժը և թե թուլությունը: «Վերքի» լեզուն դեռևս ծովարան չտեսած, չգտված այն հանեանյութն եր, վորից հետագայում ստեղծվեց մեր գրական հայերենի ծույլ վոսկին:

Այսուհետեւ Արովյանը ժողովրդի լեզուն աղատագրում է նրա մեջ չմերված ոտարամուտ բառերից՝ պարսկերենից և տաճակերենից, վորոնցով այնպիս խճողված եյին մեր բարբառները: Այս շրջանի ծնունդ են «Թուրքի աղջիկը», «Ովսաննա»-ն, «Ամերկու լիս քցիլը» և բաղմաթիվ այլ, գեռեա չտպագրված գործեր: Այսպիսով իրագործվում է Արովյանին այնքան մտահոգություն պատճառող լեզվի մաքրության խնդիրը:

Լեզվի մշակման ասպարիզում Արովյանն առաջին անհրաժեշտ խնդիրն իրագործելուց հետո, ավելի համարձակ և վճռական քայլեր և կատարում: Նրա լեզուն այնուհետեւ զրականանալու նշաններ և ցույց տալիս: Սա մի փոխանցման շրջան ե, բարբառայինից զրականին անցնելու միջանկյալ ետապ—յերկրորդ հետապը:

Այս շրջանի գործերում հաճախ միենույն պարբերության մեջ ժողովրդական ձեր կողքին մենք հանդիպում ենք զուտ զրական ձեր գործածությանը, այդպիս են զրված «Նախաշավիդ կըթության» Ա. և Բ. մասերը, «Պատմություն Տիգրանի» մեծածավալ վեպը և ուրիշ շատ գործեր:

Բերենք մի որինակ. «Յերբ մարդ կամենում ա, վոր իր միտքը այլոց հայտնի, խոսակ ե: Ուրեմն խոսիլ կնշանակե իր միտքը այլոց հայտնիլ:

Մարդ յերկու կերպ և իր միտքը այլոց հայտնում, խոսելով յերբ մերձ ե, զրելով՝ յերբ լսողը հեռի յե:

Ինչ միտք ել վոր ունենամ, յեթե չասեմ բառով, այլք ամենեվին չեն հասկանալ ինձ: Ուրեմն թե խոսելիս և թե գրելիս, մարդ բառով և իր միտքը հայտնում: («Նախաշավիդ կըթության» Բ. մաս):

Վերը բերված «հատվածից պարզ յերեսում ե, վոր Արովյանի լեզուն զգալի փոփոխություն և կրել, բարբառը մեղմացել և ու հղկվել, վերջնականապես վերացել են մեր լեզվի մեջ իրենց տեղը չգտած ոտար բառերը:

Այստեղից մինչև մշակված զրական հայերենը մի քայլ եր մտում և այդ կարեոր քայլն Արովյանը կատարում ե:

Արովյանի հարուստ արխիվում պահպանվում է ժամանժամակ

Թուսոսոյի «Նոր Ելոփա» նշանավոր վեպի թարգմանության մի պատճենը, զոր ինքնըստինքյան չափազանց նշանակալից մի փասու հանդիսանալով՝ հատուել կարեւություն ունի մանավանդ մեղ հետաքրքրող հարցի կապակցությամբ:

Ամենայն հավանականությամբ այս թարգմանությունը վերջին շրջանի գործ ե և չի ավարտված հեղինակի կյանքի ձաւիորդ հանգամանքների և հանկարծահաս վողբերգական վախճանի պատճառով: Թարգմանությունը կատարված է 40-ական թվականների համար միանդամայն անսպասելի գրական լեզվով: Բերենք մի հատված:

Պետք ե քեզանից հեռանամ, զշխո պատվական, իմ սիրաս լավ զգում ե: Պետք ե քեզանից կամ միանդամայն հույսս կտրեմ, կամ ափելի լավ ե՝ զոր յերեք քեզ չտեսնեմ: Բայց բնչ անհմայժմ. ինչպես համբերեմ: Դու ինձ քո բարեկամությունը խոստացել ես, քննիր իմ գառը փեճակը և խորհուրդ տներ ինձ:

Փատու չափաղանց պերճախոս ե: «Նոր Ելոփա» վեպի թարգմանությամբ՝ լեզվի մշակման պրոցեսն Արովյանի մոտ թեվակոխելով նոր շրջան, ավարտվում ե: Դժվար է յերեակացիլ, թե «Վերք Հայաստանի»-ն գրելոց ընդամենը ութ տարի տնց նույն հեղինակը կարող էր գրել այսպիսի լեզվով: Այդ հսկայական տարբերությունը ցույց է տալիս, թե Արովյանը կարճ ժամանակամիջոցում, պակաս քան մի տասնամյակ տեղող գրական գործուանելության ընթացքում, համեմատաբար զորքան մեծ հանապարհ է անցել: Վորքան ել փոքր ու աննշան լինի մեր ձեռքը հասած «Նոր Ելոփա» վեպի թարգմանության հատվածը, այնուամենայնիվ նա լրիվ գաղափար է տալիս այն մասին, թե ինչի հանգեց Արովյանը լեզվի մշակման գործում:

Այսպես ուրիմն, Խաչատուր Արովյանը 40-ական թվականների վերջերին ստեղծեց այնին մշակված, կուլուուրական մի լեզու, զոր հետագա 50—60-ական թվականներին յելս չգերազանցվեց: Մեր հեղինակների կողմից և Միայն 70-ական թվականների գրական հայերենը հասավ այդպիսի մշակվածության:

* *

Թիյել Արովյանի հարուստ և բազմազան ստեղծագործությունների խոշոր մասը ժամանակին չհրատարակվեց և չունեցավ այն նշանակությունը, զոր պատմականորեն վիճակված եր նրան, սակայն նրա լեզվական հայացքները, զոր այնքան պե-

ճախոս կերպով արտահայտված են «Վերք Հայաստանի» մեջ, խաղացին իրենց պատմական խոշոր զերը: Մեր կարծիքով «Հյուսիսափայլ»-ի գործիչները, այդ թվում հատկապես Միքայել Նալբանդյանը, իրենց լեզվաբանական հայացքները մշակելիս շխուսափեցին Արովյանի վորոշ ազգեցությունից: Նալբանդյանն իր լեզվաբանական հայացքներով նույնանում ե Արովյանի հետ: Նրանց յերկուսի մոտ հիմնական խնդրի յելակետը և լուծումը նույնն ե, պայմանավորված միենույն աշխարհայացքով և գասակարգային միենույն շահերով: Յերկուսի մոտ ել յելակետը ժողովուրդն ե, նրա արդեն հրամայական դարձած կուլտուրական պահանջների բավարարումը:

Պատահական չե, զոր Նալբանդյանը Արովյանի «Վերքի» լեզուն պաշտպանում ե «Արեվմուտք» լրագրի խմբագիր Ստեփան Վուկանի հարձակութիւնից, միանգամայն ճիշտ կերպով մեկնաբանելով վիպասանի միտումը: «Արովյանցի խորհուրդը և գրել անպես, զոր անկիրթ ժողովուրդը չկարծե թի գիրք և կարդում, այլ կարծե թի մի մարդ խոսում եր յուր հետ»:

Կեզի հարցը անկախ և ինքնուրուցն մի խնդիր չեր, այլ մեր ժողովրդի կուլտուր-լուսավորական շարժման մի կարեվոր մասը:

Թե Արովյանը և թի Նալբանդյանը, շատ լավ ըմբռնելով այդ մոմենտը, իրենց լեզվաշինական գործունեցության ընթացքում տառաջնորդվեցին ժողովրդին մատչելի լինելու սկզբունքով: Նրանք չարհամարհեցին ժողովրդի լեզուն, չխուսափեցին այդ լեզվի թերություններից, այլ համարձակ սպատագործեցին՝ դարձնելով այն գրական նոր լեզվի ատաղձը:

Արովյանը և Նալբանդյանը լեզվաբանության ասպարիզում վոչ միայն հանդիսացան ամենազեմոկատական տեսության մշակողները, այլ և այդ տեսության ամենահետեւլողական պրակտիկ կիրառողները: Յեթե Արովյանը գեղարվեստական խոսքի ընագագառում հայ լեզուն՝ բարձրացրեց այնպիսի մակարդակի, զոր նրա զարգացումը կանխեց մի քանի տասնամյակ, ապա նույնը կատարեց Նալբանդյանը հրապարակիուսական, քաղաքական և գիտական լեզվի ընադապաններում:

Խմբ. Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Տեխ. խմբ. և ԽԱՉՄԱՏՐՅԱՆ

Մրրագրիչ կ. ՊԵՏՐՈՎՅԱՆ

Գլավլիտի լիսազոր՝ կ-2495 Պատվեր 313, տիրաժ 2500

Հանձնված կ արտադրության 29 հուլիսի 1939 թ.

Սառըագրված կ սպազրության 10 սնուցմբերի 1939 թ.

Թուղթ 60×43, տպագր. մամուլ 6, մեկ մամուլում 36, 480 նիշ

Խոհեմական Խոստուածի տպարան, Մարքոսի փ. № 17, Յերեվան 1939 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0382555

69.097

ԳԻՒՅ 3 Ա.

ԵՐԱԲ ՄՈՐԱԴՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ Ա. ԵՍՎԱԿԻ

ՀԽՀ. Պետ. ալուստա. Երևան 1939 թ.